№ 195 ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29 — 1907 — ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29 № 195

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“ Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction „Mschak“.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

քաղաքական եւ գրականական լրագրի

ԱՌԱՋԻԿԱՅ **1908** ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(36-րդ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 բուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 բուբլի։

Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 բուբլի։

«Մշակին» գրվել կարելի ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնական փողոցների անկիւն)։

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Կիրակի, դեկտեմբերի 30-ին
ՀԱՅ ՆՈՐԱԲԱՑ ՏՆԱՅՆԱԴՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՕԳՏԻՆ

Թիֆլիսի ժողովարանի դահլիճում

ԿԸ ԼԻՆԻ
I
Մանկական տօն

ՏՕՆԱԾԱՌ

Մանկական բալ զանազան զգեստներով, մանկական մէնուէտ, գիւմատա, Լիւդովիկոս XV-ի ժամանակի հագուստներով
ԻՆՕԶԵՆՑԻԻ ղեկավարութեամբ

ՍՆԷԳՈՒՐՕՉԿԱ

Ծննդեան պատիկ
Նուէրների բաշխումն, ՍԻՆԵՄԱՏՕԳՐԱՖ
Սկիզբը 6 ժ., կը վերջանայ 9 ժամին
II
Ժամը 10-ից յետոյ հասակաւորների համար
ՎԻՃԱԿԱԽԱՂ, Պաի-շվո
ԿԱՏԻԼԻՈՆ ՄՕՆՍՏՐ, Տ օ մ բ օ լ օ, Սինեմատոգրաֆ II սերիա

2 նուագախումբ, մատչելի բուֆէտ։ Օրիգինալ զգեստները պարտադիր չեն։
Տոմսերն արժեն՝ մեծերի համար 2 ր. 10 կ., երեխաների, ուսանողների և աշակերտների համար 1 ր. 10 կոպ.
Տոմսերը կարելի է ստանալ Սուզանաճեանի խանութում և Մազզինի կօնդիտերսկում։ 2 ր. 20 կ. տոմսակներ գնողները կարող են ներկայ գտնվել ամբողջ երեկոյթին 6 ժամից սկսած։
Մեծերի 1 տոմսակի փոխարէն կարելի է ստանալ երեխաների 2 տոմսակ։
(5, 16, 25, 27, 28, 29, 30) առ. 8—7

Կիրակի, դեկտեմբերի 30-ին, ցերեկվայ ժամը 12-ին
ԿԸ ԿԱՅԱՆԱՅ.
ԹԻՖԼԻՍԻ ԲՈՐՍԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ
Թիֆլիսի վաճառականների աւագի դրասենեակում, Ֆրէյլինսկայա փող., № 4.

Թիֆլիսի վաճառականների աւագ ԱՐ. Ն. ՄԻԼՕՎԸ

Խնդրում է պ. պ. վաճառականներին, որոնք ունեն դասային վկայականներ, շնորհ բերել ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ, որը կայանալու է կիրակի, դեկտեմբերի 30-ին, առաւօտեան ժամը 10½-ին, իր դրասենեակում (Ֆրէյլինսկայա փ., № 4)—Թիֆլիսի առեւտրական դպրոցի մանկավարժական խորհրդի նախագահ եւ 5 անդամ ընտրելու նոր քառամեակի համար։ 1—1

ՄՕՍԿՎԱՅԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ
ԵՂԲ. Ա. ԵՒ ԵԱ.
ԱԼԾՎԱՆԳ
→ Պատրաստ սպիտակեղէնի և օժիտեղէնի ←
ԳՈՐԾԱՐԱՆԱՏԷՐԵՐ
Տօճերի համար ստացված եմ
ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ
զեղեցիկ սպիտակեղէն, վզնոցներ, մանժէտներ, փողպատներ (գալստուկ), բլուզներ և կանանց առաւօտեան զգեստներ (պէնուարներ)։
ՀԵՌԱԽՕՍ 477, 555.
առ. 10—7

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Շաբաթ, դեկտեմբերի 29-ին,
Հայ դերասանական ընկերակցութիւնը պ. պ. անդամների, կանդիդատների, սրանց ընտանիքների և հիւրերի համար
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ

I.
Օ. Բեռեժանովի մասնակցութեամբ
ՏՕՆԱԾԱՌ

Դրամա-էդիւդ Վ. Նեմիրովիչ-Դանչէնկօի

II.
→ ԱՐՋԸ ←
կօմ. 1 գործ.

Մասնակցում են տ. Մայսուրեան, պ. պ. Յ. Զաուիֆեան, Ցարութիւնեան և ուրիշները.
Սկիզբը 8½ ժամին
առ. 1—1

ՀՐԱՒԷՐ

Կիրակի, ամսոյս 30-ին, առաւօտեան 11 ժամին, ս. Մինաս եկեղեցում լինելու է ծխականների երկրորդ և վերջին ժողովը նոր երեցփոխ ընտրելու համար, որի մասին յայտնելով նոյն եկեղեցու երկսեռ ձայն ունեցող ծխականներին, խնդրում եմ որոշած օրը և ժամին ներկայ լինել ժողովին՝ ընտրութեանը մասնակցելու։

Թիֆլիսի հայոց եկեղեցիների բ. ժամի գործակալ՝ Ղևոնդ քան.

Ախալցխայի բնակիչներ Տիրուհի և Խորէն Գեղամեանները սրանով յայտարարում են ի գիտութիւն հասարակութեան, որ դեկտեմբերի 8-ին 1907 թ. Թիֆլիսի դատաստանական պալատի կայացրած վճռով ախալցխացի երկու եղբայրներ՝ Խորէն և Վահրամ Իսկանեանները մեղաւոր են ճանաչված այն բանում, որ Գեղամեանների մօտ հիւր եղած ժամանակ գողացել են Տիրուհի Գեղամեանի գլխի ոսկեայ զարդարանքը, որի արժէքն է 312 բուբլի։
(Գատաստ. № 20658, դեկտ. 22-ին 1907 թ.)
(Ա.Հ.Շ.) առ. 3—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ս. Շահազիզ. Վերջին տեղեկութիւններ. Ս. Շահազիզի մահվան առիթով. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Համակրելի գործունէութիւն Մեր քաղաքական գործերից. Թատրոն և երաժշտութիւն. Տեղեկութիւններ գաւառից. Կանանց կլուբը Աստրախանում. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ. Ռուսաստանի կեանքից. Մամուլ. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. ՔԱՂՈՒՄԾՔՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

Ս. ՇԱՀԱԶԻԶ

IV

Ի՞նչ էր երգում Ս. Շահազիզը, ինչ էին արտայայտում նրա քնարի լարերը։

Բանաստեղծական նրա զեղմունքների առաջին ուժեղ տողերը նուիրված էին «Սէրին», սիրոյ պաշտամունքին։

Դա մի նոր թեմա չէր հայ բանաստեղծութեան մէջ։ Բայց նոր էր Շահազիզի արտայայտվելու եղանակը, ոճի մէջ ցոլում էին առանձին թարմութիւն, հոգեկան կորով և անբռնազատ ազատ զգացմունք։

Եթէ աչքի առաջ ունենանք, որ այն ժամանակվայ հայ գրականութեան մէջ անպատեհութիւն էր համարվում ազատօրէն և շեշտակի արտայայտել սեփական զգացմունքները սիրոյ, հոգեկան անհատական վշտի, մտերմական մտածմունքների մասին, մենք կը հասկանանք, թէ ինչու Շահազիզի բանաստեղծական տողերը այնքան նոր, զուլէ և օտարոտի և միևնոյն ժամանակ այնքան գրաւիչ էին երիտասարդութեան համար։

Շահազիզը նոյնպէս նորութիւն մտցրեց, ներկայացնելով իր երգերի մէջ բնութեան գեղարուեստական նկարագիրներ նրբաճաշակ պատկերաւոր բառերով։ Մինչև այդ՝ դրանք համարվում էին անյարմար թեմաներ, եթէ չէին վերաբերում հայրենիքի ազգասիրական նկարագրութեան։ Շահազիզը ընդարձակեց հայ բանաստեղծութեան շրջանակները։

Ահա ձեզ բնութեան նկարագրութեան մի փոքրիկ կտոր։

Եւ բնութիւնը ոսկի ժպիտով,
Զգեստաւորուած վարդագեղ քողով,
Հանդիպում է օր։ Նորեկ առաւօտ
Ցողուն շաղ գոհար. ճաճում է արօտ,
Եւ ծածանուելով կայտառ շառաւուն,
Ցայտում է շիթերն իր ադամանդեան.
Եւ նորա տրտունջն այնքան սիրելի
Գրաւում է աչերդ և սիրտ և հոգի։
Զորս կողմդ գարուն։ Կանաչ կատարով
Հողաբլուրներ յառաջ են գալիս։
Եւ խաղաղ, անոյշ, հանգուցիչ քնով
Մոռանում ես դու վիշտը աշխարհի։
Վարսագեղ տնկած ծառերի շարքեր
Մեղմիկ շարժվում են։ Ուրախ և զուարթ
Վազում է առուակ։—Սիրելի պատկեր.
Ճղած կոկոնից դուրս նայում է վարդ։

Շահազիզը երկար չը մնաց լոկ սիրոյ և բնութեան երգիչ։ Պատանի բանաստեղծը յաջիշտակվեց քաղաքացիական և զաղափարական այն ուժեղ և խոշոր շարժումներով, որոնք գրաւել էին վաթսունական թուականների ինտելիգենտները։ Թէ իբրև ընդհանուր քաղաքացի, նա ամբողջապէս ներշնչվեց հասարակական բարիքի իդէալներով և անհուն պատրաստականութիւն ցոյց տուեց նուիրելու իր բնաբը քաղաքացիական թախիծի արտայայտութեան և զաղափարական վերածնութեան հանրային կոչին։

Իբրև հետևանք այդ ոգևորութեան, նա գրեց մի շարք բանաստեղծութիւններ, որոնց մէջ արտայայտված էին նրա՝ հասարակական խոհերի, փիլիսոփայական մտածմունքների և նրա զգացմունքների հուն և բազմազան երանգները։ Այդ ոգևորութեան արդիւնքն է և նրա «Լեռնի վիշտը»։

Իր ոտանաւորներից մէկում Շահազիզը այսպէս է բնորոշում այն փոփոխութիւնները, որոնք կատարվել են նրա մէջ ժամանակի ընթացքում.

Եւ ես երբեմն երգում էի
Անհոգ քնարիս լարերով
Գեղեցկութիւն միայն սէրի,
Վառուած նրա յուզմունքով։
Եւ իմ մուզան ինքնանուան
Կամէր այդպէս ինձ պահել
Եւ միշտ երազ, ցնորք քաղցրութեան
Հոգուս առջև ժողովել։
Ես զօրացայ... խորտակեցի
Այդ մուզայի բռնութիւն
Եւ սերտ սիրով ողջունեցի
Քրտնաջան աշխատութիւն։
Ես լսեցի խոր հառաչանք,
Եւ վիշտ հոգու, և զանգատ,
Եւ լաց, և սուգ, և աղաչանք,
Այն էր ազգ իմ հարազատ։
Ես ուխտեցի լինել մշակ
Հասարակաց պիտոյքի.
Երգել ուսայ գործ եւ վաստակ
Արդար հացը այս կեանքի։

Այս միևնոյն միտքը նա յայտնում է իր ուրիշ ոտանաւորներում էլ և «Լեռնի վշտի» մէջ։ Ամփոփելով իր միտքը իբրև սկզբունք, նա «Բռնաւոր Սուլթան» ոտանաւորում շեշտելով ասում է.

Նախ քաղաքացի և ապա պօէտ։

Եւ ինքը իբրև քաղաքացի ու պօէտ ներկայացրեց ժամանակակից քաղաքացու զգացմունքները բանաստեղծական տողերով։

Ա. Ք.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Դեկտ. 25-ին, Հին-Նախիջևանից 30 վերստ հեռաւորութեան վրա, սահմանապահ զինուորական պահակախմբի վրա յարձակում է գործում քիւրդերի մի մեծ բազմութիւն։

Թէ ինչ հետևանք է տուել այդ յարձակումը, մանրամասնօրէն յայտնի չէ։ Յայտնի է միայն այն, որ պահակախմբից պակասել են երեք զինուոր։

Երևանի գեներալ-նահանգապետ Եացկեվիչը մեկնել է դէպքի տեղը։

—

Քութայիս.—Դեկտ. 26-ին քաղաքի կենտրոնում մահափորձ կատարվեց չորս պահակների կեանքի դէմ, որոնք տանում էին բանտ երկու բանտարկեալների։ Պահակներից մէկը ծանր վիրաւորված է։

Կ. Պոլիս.—Քաղաքում վերստին հիւանդացան խօլերայով երկուսը, որոնցից մէկը մեռաւ։

Մէկկայում, Մէդինէում և Ջիդդայում նոր հիւանդանալու դէպք եղել է ընդամենը 176, որից 122-ը վերջացել է մահով։

Մակեդոնական ֆինանսական մասնաժողովը դեկտ. 21-ից վերսկսեց իր նիստերը, թէև նրա լիազօրութիւնների երկարատևելու մասին դեռևս Բ. Դրան համաձայնութիւնը ստացված չէ։

Թաւրիզ.— Թիւրքաց կօմիսար Թահիր-փաշան վաթսուն հեծեալ զինուորներով եկաւ Ուրմիայի մօտի Բալօզ գիւղը, ուր նա առաջին անգամ տեսակցվեց պարսից կօմիսարների հետ։

Թէհրան.—Դեկտ. 23-ին մէջլիսի նիստում կարդացվեց այն գրութիւնը, որով դիմումն է անվում օտարազգի միսսիոներներին՝ բարոյական աջակցութիւն ցոյց տալու մէջլիսին։ Կարդացվեց նաև ռուսաց և անգլիական միսսիոների մէջ ասված է, որ նրանք հերքակայացել են շահին և որ շահը խոստացել է ամէն կերպ պահպանել սահմանադրութիւնը։ Պատասխանագրի ընթերցումը թողեց հաճելի տպաւորութիւն և կենդանի խանդավառութիւն յարուցեց։

Երեկոյեան աքսորավայրից վերադարձան Ալա-ուդ-Դովլէն և եղբայրը։ Ալա-ուդ-Դովլէն նշանակված է Քիրմանշահի և Քիւրդստանի նահանգապետ։

Դեկտ. 24-ին Ուրմիա մեկնեցին 118 պարսիկ կօզակներ լիակատար սպառազինութեան մէջ։

Ս. ՇԱՀԱԶԻԶԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

—

Թիֆլիս, 26 դեկտ.

Խոր սրտով ողբում եմ ճշմարտութեան և լուսոյ երգիչ Սմբատ Շահազիզին, իմ անմոռաց ուսուցչին, ընկերոջ և բարեկամին։

Սեդրակ Մանդինեան

—

Թիֆլիս, 28 դեկտ.

Հայոց դրամատիկ ընկերութիւնը միանում է ընդհանուր ժողովրդական վշտին բազմաշխատ բանաստեղծ Սմբատ Շահազիզի մահվան առիթով։

Նախագահ՝ Զաբար

—

Մոսկվա, հայոց եկեղեցի, Իսահակ վարդապետ Տէր-Մինասեանին.

Մի խումբ նուիրեցիներ խնդրում են ձեզ ներկայ գտնվել յարգարժան և ակնառու բանաստեղծ՝ Սմբատ Շահազիզի թաղմանը և արտայայտել մեր անկեղծ ցաւակցութիւնը հայ ազգի անփոխարինելի կորստեան առիթով։

Ի դիմաց խմբի՝ Մելիք-Օհանեան, Մելիք-Այվազեան և Ս.Տ.-Յ.

—

Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերութեան նախագահ Ս. Յարութիւնեան ուղարկել է Մոսկվա հետևեալ հեռագիրները.

Մոսկվա, կարգադրիչ յանձնաժողովի անդամ Բարխուդարեանին.

Թիֆլիսի բարեգործական ընկերութեան վարչութիւնը յայտնում է իր խորին ցաւակցութիւնը տաղանդաւոր բանաստեղծի և հասարակական լուսաւոր գաղափարների համար ջերմ ժարանչողի՝ Սմբատ Շահազիզի մահվան առիթով։ Վարչութիւնս խնդրել է պ. Ստեփան Մատիկոնեանին ներկայ լինել թաղման հանդէսին ընկերութեան կողմից։

—

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

Ամանորի նախօրեակին Թիֆլիսի Ազգային թատրոնում տեղի ունեցաւ Ս. Շահազիզի «Մայրաքաղաք» դրամայի առաջին ներկայացումը։ Դերերը բաշխված էին հետևեալ կերպով.

Ամիրա՝ Ս. Ալանեան, Ամիրայի կին՝ Ա. Ալանեան, Ամիրայի դուստր՝ Ս. Ալանեան, Ամիրայի որդի՝ Ս. Ալանեան, Ամիրայի ազգատոհմ՝ Ս. Ալանեան, Ամիրայի ազգատոհմ՝ Ս. Ալանեան, Ամիրայի ազգատոհմ

Ստեփան Մաժիկոնեանին

Թիֆլիսի բարեգործական ընկերութեան վարչութիւնը խնդրում է ձեզ ներկայ լինել Սաբաթ Շահազիզի թաղման հանդիսին, իբր ներկայացուցիչ ընկերութեան կողմից։

Նահագահ՝ Ս. Ցարուբիանեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿՐԵԼԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

—

Չը կայ ընաւ այնպիսի ցանկալի և հոգեպարար մի բան, ինչպէս աշխատանքն է, անհատական ազատ և քաղցր աշխատանքը։

Որքան մեծ է այն երջանկութիւնը, երբ ազնիւ արհեստաւորը քրտնաջան աշխատանքից յետոյ վայելում է նրա պտուղները՝ յոգնած և վաստակած։

Եւ արդարև աշխատանքն է, որ բարձրացնում է անհատին թէ ֆիզիկապէս և թէ հոգեպէս, ազնուացնում է նրա բարոյականը և արժանաւոր քաղաքացիների պատուաւոր տեղը տալիս։

Աշխատանքի մի ճիւղն էլ ի թիւս շատերի անշուշտ կազմում է տնայնագործական արդիւնաբերութիւնը, որ հակադիր է գործարանային արդիւնաբերութեան, այն՝ որ կոչվում է տնային մանր արդիւնաբերութիւն, որի ժամանակ աշխատաւորը, ջուլհակը հանդիսանում է և տէր, այսինքն ինքնուրոյն արտադրող, որ վաճառի է հանում իր մթերքները։

Տնայնագործութիւնը հանդէս է գալիս իբրև սատար զբաղմունք առաւելապէս գիւղացի-երկրագործների համար։

Աշխատանքի այս ճիւղի վրա մեծ ուշադրութիւն դարձրին Ռուսաստանում մանաւանդ վերջին տասնամեակում և նա բաւականաչափ զարգացաւ. ներկայումս Ռուսաստանում ջուլհակների թիւը հաշուում են 7—8 միլիոն։ Գլխաւորապէս զէժտվոներն են, որ ջանում են ամէն միջոցներով պահպանել նրան։

Եւ ի նկատի ունենալով տնայնագործութեան անհրաժեշտ օգտակարութիւնը, իբրև ապրուստի մի միջոց և թերևս մի աղբիւր, հարկաւ անուշադիր չը մնաց մեզ մօտ, հայկական կեանքում։ Հանգուցեալ տիկին Մարգարիտ Օհանեանը առաջինը նախաձեռնող հանդիսացաւ և բացեց ջուլհականոցներ Դանձակում, Շուշում և մի քանի գիւղերում։

Թիֆլիսում մի խումբ մարդկանց մէջ էլ յղացաւ տնայնագործական ընկերութիւն կազմելու և արհեստանոց հիմնելու օգտակար միտքը։ Եւ, արդարև, մենք տեսնում ենք, որ, այդ խմբի ջանքերով, այսօր գոյութիւն ունի մի բարեկարգ կրթական-ջուլհականոց, որի տուած օգուտները ինքնին շահաւէտ են մանաւանդ աղքատ դասակարգի համար։

Եւ ընկերութեան վերջին դարձեալ կարճ ժամանակամիջոցում նրա բացած կրթական-արհեստանոցը զգալի չափով առաջադիմել է և անշուշտ ապագայում ծաղկեալ վիճակի կը հասնի, եթէ միայն ընկերութեան նպատակին նախանձախնդիր անձինք օժանդակեն այդ համակրելի գործին։ Իսկ ընկերութեան նպատակը պարզ է— նպաստել արհեստների և գիւղատնտեսական արդիւնագործութեան զարգացմանը և տարածմանը Անդրկովկասի ազգաբնակութեան մէջ։

Յիշեալ ընկերութեան օգտին դեկտ. 30-ին ժողովարանում դրվելու է պարահանդէս, տօնածառ և բաղմակողմանի ծրագրով զանազան ժամանցներ։ Այդ օրը ի ցոյց է դրվելու ընկերութեան արհեստանոցի աշխատանքի արդիւնքը՝ — զանազան գործուածքներ, իրեր և առարկաներ։

Հարկ կայ արդեօք յորդոր կարդալ հասարակութեան՝ ամէն միջոցներով նպաստել յիշեալ օգտակար ընկերութեան, որի նիւթական միջոցները, ինչպէս առհասարակ նորաբաց ընկերութիւններինը, շատ և շատ սուղ են։

Համոզված ենք, որ դեկտ. 30-ի պարահանդէսի ճոխ ծրագիրը և ընկերութեան համակրելի գործունէութիւնը կը գրաւեն բազմաթիւ համակրողներ, որոնք իրանց լումաներով նպաստած կը լինեն ընկերութեան դրամական դրութեան բարելաւման և տնայնագործական արհեստի պէս հանրօգուտ գործի աջող զարգացման։

Թող լաւատես լինենք այս անգամ արդիւնաւէտ գործին աջակցելու պատրաստականութեան վերաբերութեամբ։

Ս. Ես.

ՄԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՈՐԾԵՐԻՑ

VII

Ինչպէս որ վաճառականը, կամենալով իր ունեցած առևտուրը վերջացնել կամ թէ նրա ձևն ու տեսակը փոխել, լիկվիդացիայի է ենթարկում իր ունեցած գործերը՝ շտապով ու էժան գնով ծախծխում, գլխից ոտ է անում իր ունեցած բոլոր ապրանքը, ճիշտ այդպէս էլ ներկայումս մեր կառավարութիւնը, կամենալով նորից հին կարգերին ու ըէժիմին վերադառնալ, ամենայն արագութեամբ լիկվիդացիայի է ենթարկում այն բոլոր գործերը, որոնք այսպէս կամ այնպէս կապ ունին մեր երկրի ազատագրական շարժումների հետ։

Լիկվիդացիայի է ենթարկում նա վերջին ռուս-եապօնական դժբաղդ պատերազմի գործերը, մէկը միւսի ետևից դատաստանական պատասխանատուութեան ենթարկելով այդ պատերազմում խայտառակված հերոսներին, որովհետև հէնց այդ խայտառակութիւնը գլխաւորաբար մերկացրեց հին կարգերի ու հին ըէժիմի ամբողջ նեխուածութիւնը, որ և սկիզբ դրեց ժողովրդային ընդհանուր զայրոյթի պոռթկումին ու տեղի ունեցած յետագայ բոլոր նշանաւոր պատմական դէպքերին։

Լիկվիդացիայի ենթարկեց նա երկրորդ Պետական Դուման, տաժանակիր աշխատանքների ու աքսորի դատապարտելով նրա 52 անդամներին։

Լիկվիդացիայի ենթարկեց նա և առաջին Պետական Դուման, հաստատեա թէ իր ամբողջ կազմով, նոյնպէս զանազան պատիժների դատապարտելով նրա ամբողջ fнuorнuմը, այսինքն՝ պատգամաւորների այն թիւը, որը կատարելապէս բաւական էր համարվում Դումայի նիստերի ժամանակ օրէնսդրական որոշումներ կայացնելու համար։

Լիկվիդացիայի են ենթարկվում ու դեռ շարունակում են ենթարկվել այն բոլոր մեծ ու փոքր ազատութիւններն ու զանազան արտօնութիւնները, որ ժողովուրդը ձեռք էր բերել երջանիկ օրերին։

Մի խօսքով՝ լիկվիդացիա և անվերջ լիկվիդացիա արդարադատութեան շրջանում։

Դատաստանական քննութիւններ, մանաւանդ քաղաքական գործերի քննութիւններ Ռուսաստանը շատ ու շատ է տեսել, և առաւել իր պատմութեան յիսնամեակի ընթացքում, սակայն այն, ինչ որ կատարվեցին վերջերս և դեռ շարունակում են կատարվել, բոլորովին չը տեսնված տրագիկոմեդիա է ներկայացնում։

Վերցնենք թէկուզ հէնց ռուս-եապօնական չարաբաստիկ պատերազմի տխրահռչակ հերոսների դէմ սկսված ու շարունակվող դատավարութիւնը։ Մթթէ դա մի կատարեալ տրագի-կոմեդիա չէ։ Հին ըէժիմի պաշտպան և հին կարգերին վերադառնալու ձգտող բիւրօկրատիան դատաստանական պատասխանատուութեան է ենթարկում հէնց այդ ըէժիմի ամենահարազատ զաւակներին ու ներկայացուցիչներին։ Ինչի՞ նման է դա։ Մթթէ այդ միենոյնը չէ՞, որ ճահիճների սիրահարը ու նրանց ամենամեծ խնամքով պահպանողը բարկանայ ու դժգոհ լինի, որ ճահիճներում գորտեր ու զանազան միազմներ են ապրում ու աճում։ Մթթէ ճահիճը կարող է առանց միազմների լինել։ Ինչով են մեղաւոր Ստեսելը, Ֆօկը, Նաբոկովը, Բօժեսլավսկին ու իրանց մեծ ու փոքր արբանեակները, եթէ նրանք եղել են այն, ինչ որ են և ինչ որ կարող էին միայն լինել այն ընդհանուր և այլանդակ ըէժիմի մէջ, որին ամենայն համարձակութեամբ կարելի է usեեեյաբուծութիւն անուանել։

Ինչով են մեղաւոր մարդիկ, եթէ ստեսելարուծութիւնը ամէն կերպ ախտաւոր և ընդունակ է միմիայն գեներալ Ստեսելների նման մարդկանց առաջ քաշել, բարձր աստիճանների վրա կանգնեցնել ու նրանց միջոցով միայն կառավարվել։ Եւ կարող է մթթէ ստեսելարուծութիւնը գոյութիւն ունենալ առանց Ստեսելների։ Եվ ինչու պատասխանատուութեան ենթարկել այդ ողորմելիներին, քանի որ հէնց նրանցով է մինչև օրս ապրել ու շարունակում իր գոյութիւնը պահպանել բիւրօկրատական ամբողջ ըէժիմն ու սիստեմը։

Չէ՞ ցանկանում արդեօք մեր բիւրօկրատիան իր սկսած այդ դատավարութեամբ միամիտ ժողովրդի աչքերին թոզ փչել, կամենալով ասել. «Տեսէք, ես որչափ անաչառ եմ ու արդարադատ, որ մինչև իսկ իմ հարազատ զաւակներին էլ չեմ խնայում և նրանց էլ եմ պատասխանատուութեան ենթարկում»։

Եւ, ի հարկէ, հէնց այդ խմաստը ունի պատերազմի հերոսների դէմ սկսված դատավարութիւնը։ Հէնց դրա համար էլ ոչ մի արժէք չէ կարող ունենալ այդ դատավարութիւնը իրերի դրութեանը ծանօթ ու փոքր ի շատէ հասկացող մարդու համար։

Ճիշտ է, պէտք էր լիկվիդացիայի ենթարկել վերջին պատերազմի գործերը, պէտք էր դատաստանական քննութիւն ըսկսել և հրապարակ հանել այդ պատերազմի շատ ու շատ մութ կողմերը։ Բայց այդ անողը յամենայն դէպս չը պէտք է լինէր այն բիւրօկրատիան և այն ըէժիմի օրով, որը հէնց այդ չարաբաստիկ պատերազմի սկզբից ու վարողն էր։ Այլ հանգամանքներում և այլ ժամանակ այդ դատավարութիւնը, անշուշտ, բոլորովին ուրիշ կերպարանք և այլ բնաւորութիւն կը ստանար։ Այդ ժամանակ գուցէ մեղադրեալների նստարանի վրա առաջին տեղում նստած կը լինէին ոչ թէ գեներալ Ստեսելը կամ Ֆօկը, այլ հէնց այն մարդիկ, որոնք իրանց անձնական շահադիտական նպատակներով այդ չարաբաստիկ պատերազմը սկսելու գլխաւոր պատճառը եղան։ Այդ ժամանակ հաւանական է, որ Ստեսելն ու իր մեղսակիցները բոլորովին երկրորդական ու երրորդական տեղ բռնէին մեղադրվողների չափազանց երկար շարքի մէջ։

Բոլորովին տարբեր բնաւորութիւն էին կրում 2-րդ Պետական Դումայի 52 սոց.-դեմոկրատ անդամների և առաջին Դումայի 169 անդամների դէմ կատարված դատավարութիւնները։ Դրանք արդէն ոչ թէ կոմեդիա, այլ աւելի քան տրագեդիաներ էին։ Ինչպէս շատ իրաւացի կերպով նկատեց դատվող առաջին Դումայի պատգամաւորներից մէկը, այդ դատավարութիւնը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ վրիժառութեան մի գործողութիւն։ պատերազմող կողմերից մէկը, յաղթութիւնը տանելուց յետոյ, դատում ու պատիժների էր ենթարկում իր ձեռքը ընկած գերիներին։

Այդ երկու դատավարութիւններն էլ նոյն բնաւորութիւնն էին կրում, ինչ բնաւորութիւն որ կարող էր ունենալ, եթէ, օրինակի համար, յաղթող եապօնիան պատերազմը վերջանալուց յետոյ սկսէր դատի ենթարկել իր ձեռքը գերի ընկած բոլոր ռուս գեներալներին ու օֆիցէրներին։

Ի՞նչ պակեր կը ստացվեր այդ ժամանակ։ Ե՞րբ է տեսնված, որ պատերազմող կողմերից յաղթողը, վրէժխնդրութեամբ լցված, դատի ու պատիժների ենթարկի իր բռնած գերիներին։ Այդպիսի վայրենի սովորութիւն կար, այո, շատ հին ժամանակներում, այդ կայ դեռ այսօր էլ վայրենի ցեղերի մէջ, որոնք մինչև իսկ ուտում են իրանց բռնած գերիներին, բայց... Ո՞րտեղ ենք մենք և ի՞նչ դարում ենք ապրում։

Իսկ դատված ժողովրդային ներկայացուցիչներին գերիների հետ համեմատելը այն աստիճան ակներև է, որ հաղիւ թէ հարկ լինի այդ մասին երկար բացատրութիւններ տալու։ Դրան ապացոյց կարող է լինել հէնց այն մեղադրական ակտը, որով պատգամաւորները պատասխանատուութեան էին ենթարկված։ Նրանք մեղադրվում էին այն բանի մէջ, որ կամեցել են տապալել հին պետական կարգերը ու նրանց տեղ նորը հաստատել։

Սակայն ի՞նչ հին ու նոր պետական կարգերի մասին է այդտեղ խօսքը։ Արդեօք նրանք չէի՞ն ցանկանում տապալել հէնց այն պետական կարգերը, որոնք խիստ կերպով քննադատվել ու դատապարտվել էին նախկին մինիստր կոմս Վիտտէի կողմից և այդ դատապարտութիւնը հաւանութեան արժանացել բարձրագոյն իշխանութիւնից։ Եւ արդեօք հէնց այն նոր կարգերը հաստատելուն չէի՞ն ձգտում մեղադրվողները, որոնք ընդհանուր գծերով ուրուագծված էին հոկտեմբերի 17-ի պատմական մանիֆեստի մէջ։ Ուրեմն էլ ի՞նչ յանցանքի կամ պատասխանատուութեան հարց կարող է լինել, քանի որ հէնց այն ըէժիմը, որ ուզում էին տապալել մեղադրվողները, դատապարտվել ու անպէտք էր համարվել հէնց բիւրօկրատիայի կողմից, և այն նոր կարգերը, որ ուզում էին հաստատել, նոյնպէս հաւանութիւն էին գտել նրա կողմից։ Ո՞վ է մեղաւոր, որ բիւրօկրատիան, չը կարողանալով սկզբից չափել իր ոյժերը և ամէն բան իր համար կորած համարելով, իրան վերջնական կորուստից ազատելու համար էր միայն հին կարգերը տապալելու և նորերը հաստատելու կողմնակից հանդիսացել, իսկ յետոյ, երբ նա նորից իր ոյժերը հաւաքեց, ուզեց բոլորովին այլ երգ երգել և զղջաց, որ հոկտեմբերի 17-ի մանիֆեստը լոյս աշխարհ է հանել։

Եթէ պետական կարգերի հիմք ընդունենք այն, ինչ որ այդ մանիֆեստի մէջ է ուրուագծված, այն ժամանակ հարց է ծագում, թէ արդեօք ո՞վ է ձգտում պետական կարգերը տապալել ու նորերը հաստատել. մեղադրող ու դատող բիւրօկրատիան թէ՞ մեղադրվող պատգամաւորները։ Ինչ էլ լինի, հին և նոր կարգերի կողմնակիցները այս երկու տարվայ ընթացքում իրանց կուրը մղում էին բացարձակ կերպով և այն բոլոր միջոցներով, ինչով որ կարող են օգտվել պատերազմող կողմերը։ Եւ ժողովրդային ներկայացուցիչները երբէք չէին կարող երևակայել, թէ պարտութեան դէպքում պատերազմող հակառակ կողմը այն աստիճանի պիտի հասնի, որ իրանցից վրէժ կանի նրա համար միայն, որ իրանք մղված պատերազմում պարտվել ու թշնամու ձեռքը գերի են ընկել։

Բայց աչքերը կարմրած բիւրօկրատիան բոլորովին կորցրել է իր պաղարիւնութիւնը։

Ռ.-Ագատ

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

I

Դեկտեմբերի 23-ին, Արտիստական ընկերութեան դահլիճում, յօգուտ Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան, տեղի ունեցաւ պարահանդէս և ներկայացում։ Ներկայացումը գրաւել էր մեծ բազմութիւն, որ ժողովվել էր դեռ ներկայացումից առաջ։

Բոլորովին նորութիւն էր մեզ համար mezzo-soprano տիկ. Մելիք-Բաբախանեանը։ Կը գայ ժամանակ, երբ հայկական բեմի վրա կը փայլէ այս երգչուհին, եթէ նա լրջութեամբ աշխատէ և սիրէ իր արուեստը։ Հաճելի ձայնը՝ բաւական լաւ մշակված, գեղեցիկ արտասանութիւնը դրականապէս գրաւեցին ամբողջ հասարակութեան ուշադրութիւնը, որ մեծ հետաքրքրութեամբ լսում էր։ Տիկին Նորեկը ըստ երևոյթին նոյն Մելիք-Բաբախանեանն էր, որ մտադրվել էր Ազուչինի խմբում հանդէս գալ կեղծ անունով։

Անաջող դուէտը պէտք է վերագրել նրա մեծ յուզմունքին, որ նկատելի էր և ձայնի մէջ, որովհետև ձայնի թուլացնելը չէր նկատվում «Ամերիս»-ի դրամատիկական դերում, չը նայած որ տ. Ստեփանեանը «Աիդան» երգեց բոլորովին այլ տօնով։

Մօբերիսօն երգեց զգացված, բայց խօսքերը մենք չը կարողացանք որոշել։ Դիրիժօր Պալիեվը թէև փոքր ինչ յուզվում էր, բայց իր դերը կատարեց աջողութեամբ։

Բեժիսոր Բէլսկոյ ըստ երևոյթին ոչ մի աշխատանք չէր կատարել Տրուբադուրի բանտի տեսարանի համար։ Որքան մեզ յայտնի է, բանտերում այնքան մեծ լուսաւորութիւն չէ լինում, որպէսզի լոյսը ծակէր բանտարկեալների աչքերը։ Ընդհանրապէս ներկայացումը անցաւ աջող այնպիսի բեմի վրա, ինչպիսին Արտիստական ընկերութեան դահլիճի խեցգաձև մասն է։

Ե.

II

Դեկտեմբերի 27-ին, Արտիստական ընկերութեան դահլիճում, յօգուտ Ներսիսեան դպրոցի աղքատ աշակերտների կայացած պարահանդէսին ներկայ էր մեծ բազմութիւն։ Դահլիճը շատ շքեղ զարդարված էր։ Նախաձեռնողները ոչինչ չէին խնայել արտաքին գեղեցիկ ցոյց տալու։

Սկզբում հանդէս եկաւ դպրոցի երգեցիկ խումբը Միրզայեանի ղեկավարութեամբ։ Սպասում էինք լսել Եկմալեանի կամ Կարա-Մուրզայի քաղցրալուր երգերը։ Բայց... դահլիճը սկսեց դղրդալ վայրենի գոռում-գոչումով... Ոչ մի մշակում, ոչ մի նշոյլ երաժշտութեան, ձայների համապատասխան միաւորման, այլ սոսկ արհեստական թքով կպցրած գոռոցներ և ականջ ծակող դիսոնանսներ... Միրզայեանի ձայնագրած թէ «Արիք Հայկազունքը» և թէ «Սիփանայ սէգ սարի վրան» աննպաստ տպաւորութիւն գործեցին հանդիսականների վրա՝ երաժշտական տեխնիկայի միանգամայն բացակայութեան և խմբի անսիստեմ լինելու պատճառով։

Բաւարար զոհացում պատճառեցին տ. Սավիցկայա, Կօրգանովա և Բիլշէյն իրանց երգով, Մատկովսկին՝ նուագելով, և պ. Արմէնեան կարդալով երեք ոտանաւորներ։ Գ. Քափանկեան խնդրանքով մի քանի ոտանաւորներ արտասանեց ռուսերէն լեզուով։

Վերջում տեղի ունեցան պարեր՝ եւրոպական և ասիական։

Պարահանդէսը ուրախ կերպարանք ընդունեց վերջում։ Արդիւնքը հաւանօրէն բաւարար կը լինի։

Ե.

III

Բաթում, 24 դեկտեմբերի

Դերասան Ն. Յովհաննիսեանի բենեֆիսը, որ ներկայացվեց ամսես 22-ին երկաթէ թատրոնում, հաւաքել էր փոքր թուով հանդիսականներ։

Այս անգամ Ն. Յովհաննիսեանը, ձեռք վերցնելով կլասիք պիէսներից, դրել էր ժողովրդին շատ մատչելի պիէսներ։ խաղացին «Լիզա» կօմեդ. 3 գործ., հեղ. Ն. Յովհաննիսեանի, «Կախարդված պրինց» և «Խելագար»։

Շատ բարդ չէ «Լիզա» պիէսան. գաւառական բարբառով գրված, դիւրահասկանալի, ժողովրդի սրտին մօտ բան է։

Դրա համար էլ, մանաւանդ վերջին գործողութեան մէջ, երբ Լիզան յանդիմանում էր հօրը, որ իր սէրը զոհում է փառասիրութեան համար—դրա հետ միասին կոստիային—միշտ, ամէն խօսքից յետոյ հեռուում էր բուռն ծափահարութիւն։

Ուժեղ տպաւորութիւն գործեց հանդիսականների վրա Լիզայի ներկայացումը։

Ահա նրա բովանդակութիւնը. միջին կարգի անուս վաճառական Գասպարը (Ն. Յովհաննիսեան) իրա գիմնազիստ աղջկան՝ Լիզային (տիկ. Յովհաննիսեան) նշանում է ուստա Սարգսի (Յ. Սողոմոնեան) հաշուապահ որդու վրա (Աքէլ)։

Երբ ուստա Սարգսի տանը հարսանիքի պատրաստութիւններ էին տեսնում, Գասպարը Լիզային խոստանում է տալ մի ուրիշին՝ վաճառական Արտէմ Իվանիչ Զանփոլադեանի (Յ. Զաքարեան) նորաւարտ ինժեներ որդուն՝ կոստիային (Ս. Ներսէսեան). այստեղ սկսվում է դաղափարական կռիւը երկու հոսանքների մէջ։ Զը նայած Գասպարի յամառութիւններին, որ իր աղջիկը յետ կանգնի Գարեգինից, բայց ոչ մի հնարք։ Չէ կարողանում յետ կանգնեցնել Լիզային։

Լիզան ուղղակի դէմ առ դէմ յանդիմանում է հօրը և խայտառակում կոստիային... Այստեղ վերջանում է պիէսան։

Դերասանը Գասպարի տիպը այնքան բնական էր դուրս բերել, որ հանդիսականներս երբեմն մոռանում էինք, թէ թատրոնում ենք. մեզ երևակայում էինք իսկապէս Գասպարի տանը։ Այս անգամ տիկ. Յովհաննիսեանը իրան համապատասխան դերի մէջ էր։ Իսկ սիրողները ընդհանրապէս լաւ էին խաղում, մանաւանդ Աքէլը, ինչպէս ձուկը ջրում։

Թոյլ անցկացաւ «Կախարդված պրինցը», ինչպէս գոմէշներով լծած սայլը, թէև դերասանը լաւ էր խաղում կօշկակար Հանսի դերը։

«Խելագար» ժօնսօլգից յետոյ ժամը 2-ին ցրվեցինք տուն մեծ բաւականութեամբ, թատրոն լցված նապաստակներով միասին։

Վ. Մարտիրոսեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Գանձակ, 22 դեկտ.

Մօտենում են տօները. հարևան ռուսը, գերմանացին փութիկոտութեամբ ամէն տեսակ պատրաստութիւններ են տեսնում, որքան կարելի է ուրախ, զուարճալի օրեր անցկացնելու։ Նրանք գնում են տօնածառեր, ընծաներ երեխաների համար, պատւիրում են նոր հագուստներ, որոնց տարափի տակ դերձակները առժամանակ մոռացել են իրանց ցաւերը...

Իսկ ի՞նչ բանի է հայ քաղաքացին, մշակից սկսած մինչև առաջնակարգ վաճառականը. նրանք բոլորը դժգոհ են իրանցից, իրանց շրջապատից, իրանց անել վիճակից. բոլորը միջոց, հնար են մտածում այս անիծեալ քաղաքից հեռանալու. գուցէ օտար քաղաքներում մի հանգիստ անկիւն գտնեն, որ իւրայինները իրանց չը նեղեն, չը հալածեն։ Արդէն մի քանի յայտնի վաճառականներ պատրաստվում են հեռանալ այս անիծեալ վայրից։

Ո՞վ է այժմս հայ գանձակեցուն իր թանգագին հայրենիքից հալածողը. առևտուրի անկումը, գործի պակասութիւնը, դրամի պակասութիւնը։ Այո՛, այդ բոլորը կայ, բայց ամենայարգելի պատճառը կայքի, անձի, ազգատացած գրպանի պաշտպանութեան հարցերն են—պաշտպանվել ոչ թէ քիւրդից, թիւրքից, այլ «մի աւազանով մկրտված» իր հարազատ եղբօրից...

Խաղաղ քաղաքացիք ներկայումս Գանձակում գտնվում են ուղղակի անպաշտպան դրութեան մէջ։ Իշխանութեան ներկայացուցիչը յայտնել է իր ժամանակին, որ հայերը իրանց կայքի, գոյքի, անձի պաշտպանութեան համար պահակներ վարձեն. բայց փորձը ցոյց է տուել, որ այդ միջոցն ևս գործնական չէ։

Թշնամին զինված է, զոհերը անզէն. ինչպէս պաշտպանվեն։

Շատերը այն օպտիմիստ կարծիքի են, որ յեղափոխական կուսակցութիւնները եթէ մի սպառնալի թռուցիկ յայտարարեն այդ չարագործների դէմ, անմիջապէս չարիքները կը դադարեն. բայց այդ դիւրահաւատները չեն իմանում, որ այդ կուսակցութեան պատկանողները բոլոր չարագործներին հաշուում են «ներկայ կառավարութեան հարազատ զաւակներ» և միանգամայն անհնար են գտնում այդպիսի միջոցներով չարիքի առաջն առնել...

Մինչև օրս բոլոր չարիքի պատճառը հաշուում էին մի պարոնի, որին անցեալ օրը ոստիկանութիւնը ձերբակալեց. շատերը այն կարծիքի էին, որ քաղաքը այժմս բոլորովին կը խաղաղվի։ Բայց յաջորդ օրը, ժամը 10-ին, քաղաքիս առաջնակարգ փողոցում, Փաթալեանի տան դիմաց՝ զօրանոցի առաջ 15 հոգուց բաղկացած մի խմբակ յարձակվում է Սուքիասեան եղբայրների կառքի վրա (Սուքիասեանը ոստիկանութեան թոյլատրութեամբ զինված պահակ է պահում), բայց նրա ետևից եկող միւս կառքը խանգարում է չարագործներին վրնասել Սուքիասեանին, և նրանք թողնում են իրանց զոհին և ցրվում այս ու այն կողմը։ Այս է մեր վիճակը։

Սագան

ԿԱՆԱՆՑ ԿԼՈՒԲ ԱՍՏՐԱԽԱՆՈՒՄ

—

Աստրախան, 14 դեկտեմբերի

Այս օրերումս Աստրախանում բացվեց կանանց կլուբ. այդ հիմարութեան առաջ գալը մեր այս ապականված օրերում աւելի քան ուրախալի է և ուշադրութեան արժանի։ Ասում եմ ապականված, որովհետև մի սոսկալի, չը տեսնված բան է կատարվում տեղիս «Վելօսիպեդնի» կոչված կլուբում։ Թղթախաղը և լոտոն, ինչպէս պատմում են ականատեսները, այնպիսի սարսափելի չափեր է ընդունել, որ ապշեցնում է մարդու։ Ամէն գիշեր այնպիսի բազմութիւն է հաւաքվում, մանաւանդ հասարակ աշխատաւոր դասակարգից, որ այն մեծ, հոյակապ, մօտ 20 սենեակներից բաղկացած շինութիւնը շատ անգամ նոյնիսկ իրանց հետ վերցրած՝ մինչև ժամը 1—2-ը նստած են «կանաչ սեղանի» շուրջը... Ծերունի տղամարդիկ, մոռացած իրանց պատկառելի հասակը, նստած են լոտոյի սեղանի առաջ... Միով բանիւ բոլորը խաղում են, բոլորը... ով ունի 10 կամ 20 կօպ.։ Մանաւանդ այդ անաքանդ լոտոն, որ քամում է միջին և աղքատ դասակարգի վերջին կօպէկը։ Բոլորը զզուած են այդ երևոյթով, բոլորը դատապարտում են, բայց... ոչ մի օգուտ. յանկարծակի և հեշտ ձևով փող աշխատելու տենչը համակել է բոլորին։ Եւ ահա մի խումբ կանանց մէջ միտք է յղացել կուլ այդ չարիքի դէմ, հիմնելով յատուկ կանանց մի կլուբ, որը նպատակ պէտք է ունենայ պաշտպանել ինչպէս կանանց իրաւունքի հաւասարութիւնը, այնպէս և նրա պատել նրանց մտաւոր և բարոյական զարգացմանը։ Իսկ այդ նպատակին հասնելու համար ընկերութիւնը կազմակերպում է հասարակական դասախօսութիւններ, գրական-երաժշտական երեկոյթներ, ընթերցանութիւններ, ներկայացումներ և այլն։ Դեկտեմբերի 2-ին, կիրակի օրը, կայացաւ առաջին ընդհանուր ժողովը, որտեղ յայտնվեց, որ ընկերութեան կանոնադրութիւնը հաստատված է, և կատարվեց վարչութեան 14 անդամների ընտրութիւնը։

Այնուհետև ճառեր արտասանվեցին՝ շնորհաւորելով այդպիսի կարևոր հիմնարկութեան երևան գալը Աստրախանում։ Առ այժմ ընկերութիւնը ունի մօտ 60 անդամուհի.

ողամարգիկ կարող են մասնակցել միայն խորհրդակցական ձայնով։ Առաջին ժողովը տեղի ունեցաւ հայոց թեմական դպրոցի դահլիճում։

Մենք ևս շնորհաւորում ենք կանոնց կլուբի առաջ գալը մեր քաղաքում. թող չընկճվին մեր կանայք։ Այդ ընկերութիւնը իբրև նոր բացվող՝ կուսակցայ, անշուշտ, իր թերութիւնները, զուցէ և ծաղրվի մի քանի կողմից, բայց այդ չը պէտք է վանիսի կողմից, բայց այդ չը պէտք է վանիսի կողմից. նրանք իրանց լուրջ և տոկուն աշխատասիրութեամբ պէտք է ցոյց տան իրանց քոյրերին աշխարհի սեն ու տան իրանց քոյրերին աշխարհի սեն ու տան իրանց քոյրերին, արմատախիլ ապիտակը և, ըստ կարելոյն, արմատախիլ անեն այն չարիքները, որ բուն են դրել նրանց մէջ։

Ս. քահ. Ասլանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Դեկտ. 28-ին Թիֆլիսից Ուլուխանլու մեկնեց մի յատուկ ժամանաժողով Ուլուխանլու-Զուլֆա նոր կառուցված երկաթուղագիծը դիտելու համար։

✦ Այն աւազակախմբից, որ դեկտ. 22-ին փորձեց կողոպտել պօստային գնացքը Կարբաղ կայարանի մօտ, առայժմ ձերբակալել են վեց խմբերէլներին։

✦ Թիֆլիսի նահանգապետը մի գրութեամբ խնդրել է Թիֆլիսի քաղաքագլխից հաղորդել այն հրահանգները, որ դուման, համաձայն քաղ. կան. 103-րդ յօդուածի, տուել է գործադիր մասնաժողովներին։

✦ Թիֆլիսի հայոց դրամ. ընկ. վարչութիւնը Բագուի կուլտուրական միութեանը հետևեալ հեռագիրն է տուել. «Հայոց դրամ. ընկ. վարչութիւնը և հայ դերասանական ընկերութիւնը իրանց խորին վիշտն են յայտնում դերասանուհի Քնարիկի վաղաժամ մահվան առիթով։ Յուղարկաւորութեան ներկայացուցիչ է նշանակված Լ. Բաբայանը։ Նախագահ՝ Զաբար»։

✦ Դեկտ. 27-ին Թիֆլիսի քաղաքագլուխը, սանիտարական-բժշկական ժարմինը և ձայնաւորներից շատերը դիտեցին քաղաքային սպանդանոցը և ծանօթացան գործերի հետ։

✦ Դեկտ. 27-ին, երեկոյեան ժամը 11-ին, Վօրոնցովի արձանի մօտ էլեքտրաքարշի վագոնը կտրեց Թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ ծառայող Ալէքսանդր Պուշկինսկու ձախ ոտքը, երբ նա կամենում էր իջնել վագոնից։ Պուշկինսկին հիւանդանոց տանելու ժամանակ մեռաւ։

✦ Թիֆլիսի նահանգապետը հաստատեց իշխ. Ա. Մ. Արղութեան-Երկայնաթաղուկին Թիֆլիսի քաղաքային վարչութեան անդամի պաշտօնի մէջ։

✦ Դեկտ. 26—27-ին Թիֆլիսի քաղաքային դումայական ֆինանսական ժամանաժողովը վերջացրեց քաղաքի 1908 թ. ծախքերի նախահաշուի քննութիւնը։ Հաւանօրէն քննութիւնը կաւարտվի այսօր, իսկ վաղը մտադրութիւն կայ հաշուեկշիռը որոշիր Նախահաշիւը երևի դումայի քննութեան կը յանձնվի յունվարի սկիզբներին։

✦ Թիֆլիսի քաղաքային սանիտարական-բժշկական տեսուչ պ. Ստեփանեանը կարգադրել է շուկաների վրա հսկող մասնաժողովների անդամների թիւը աւելացնել։ Ուշադրութիւն է դարձված այն հանգամանքի վրա, որ շատ տեղ ծախվում է կեղծված մեղր։ Վաճառողներից փորձի համար վերցված է քիչ-քիչ՝ քաղաքային լաբորատորիայում քննութեան ենթարկելու համար։

✦ Թիֆլիսի գործակատարների ընկերութիւնը որոշել է առաջիկայ կիրակի օրը, դեկտ. 30-ին, չաշխատել։ Նաև որոշված է պարտաւանք յայտնել այն ընկերներին, որոնք աշխատել են կիրակի օրը, դեկտ. 23-ին։

✦ Երէկ, դեկտ. 28-ին, Թիֆլիսի էլեքտրաքարշը կանգ առաւ $1^1/_2$ ժամով։ Պատճառը այն է եղել, որ էլեքտրական կայարանում աշխատողներից մէկին վարչութիւնը արձակում է յարգելի պատճառով։ Բայց և այնպէս, ծառայողների պահանջի ճնշման տակ, վարչութիւնը կրկին ընդունում է իր պաշտօնում արձակած ծառայողին, որով և գործադուլը վերջանում է։

✦ Ղզլարից հաղորդում են «Բէկ» լրագրին, որ աւազակները գերութիւնից ազատել են արդէն կալուածատէր Ալեքսէյ Բրեդիխինին, որին բռնել էին նոյեմ. 12-ին Ղզլարի ճանապարհին։ Լեռներում նա մնացել է մօտ մի ամիս և ազատվել է 12 հազար բուբլի վճարելուց յետոյ միայն։ Այդ փրկանքը Բրեդիխինի եղբայրը յանձնել է աբրեկներից (աւազակներից) մէկին։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Դեկտեմբերի 25-ին անյայտ չարագործներ վիրաւորել են «Տօլէ և Ընկ» զսվօդի գնդապան Թագէոս Աբօյանին, երբ կամեցել է զսվօդի գաբրաը կողպել։

—

Դիւղամանաս Գաւիդ Առատամեանի ընակարանից դեկտեմբերի 25-ին անյայտ մարդիկ գողացել են 350 բուբլու զանազան իրեղէններ։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

—

✦ Դվինսկում այրվել է Զաքսի լուցկիների գործարանի գլխաւոր մասը։ Վնասը մօտ 150,000-ի է հասնում։ Գործարանում աշխատում էին 500 մշտական և 200 օրապահ բանուորներ։ («Բէկ»)

✦ Դեկտեմբերի 15-ին ռուսական ժողովարանում քահանայ Կրասովը մի զեկուցում է կարդացել Օսմանովների Տան թագաւորութեան առաջիկայ 300-ամեակը յաւերժացնելու եղանակների մասին։ Ինչպէս հաղորդում է «Нов. Вр.» լրագիրը, ժառանգութիւն կայ Պետերբուրգում հիմնել Օսմանովների Տան համալսարան և նրան կից եկեղեցի։

✦ «Слово» լրագրի ասելով, Պետերբուրգի բիւրօկրատական շրջաններում լուր է տարածվել, որ ֆինլանդական գեներալ նահանգապետ Հերարդի հրաժարականը իրականանալու վրա է. նրա փոխարէն նշանակվում է Մոսկվայի նախկին նահանգապետ Ռէյնբօտը։ «Бирж. Вѣд.» լրագիրը սակայն արժանահաւատ աղբիւրներից տեղեկացել է, որ ֆինլանդական գեներալ-նահանգապետ է նշանակվում Կրոնշտադտի զինուորական նահանգապետ գեներալ Իվանովը։

✦ Նոյեմբերի 30-ին Եանայա-Պոլեանա կալուածում Լեվ Նիկոլայեվիչ Տօլստոյը, ձիով իր սովորական զբօսանքը կատարելու ժամանակ, վայր է ընկնում ձիւնով լի փոսի մէջ։ Բարեբաղդաբար այդ բոպէին մօտիկից անցնելիս է լինում կառապանը և նրան իսկոյն բերում է տուն։ Տօլստոյի ձախ ձեռքը դուրս է եղել ընկած ուսից։ Բժիշկը ձգում է նրան իր տեղը։ Զը նայելով ուսի և ձեռքի ցաւերին, Տօլստոյը դեկտեմբերի 11-ին ոտքով 5 վերստ ման է եկել։ («Н. В.»)

✦ Լօնդօնից «Р. Сл.» լրագրին հեռագրում են, որ Լօնդօնի մամուլը մեծ ուշադրութեամբ հետևում է վրբրգեան կոչին։ Պետրունկեվիչի և Կօկօշկինի ճառերը, նրանց ասելով, գեղեցիկ կերպով արտայայտում են այն բոլոր նպատակներն ու խնդիրները, որոնց ձգտում էր իրագործել առաջին Պետական Դուման։

✦ Դեկտեմբերի 16-ին Մոսկվայի Նովինսկի զբօսարանին մօտիկ բացվում է յատկապէս կանանց համար շինված նոր բանտը։ («Т.»)

✦ Կալուգայից հեռագրում են Մոսկվայի լրագիրներին, որ զեմստվային ժողովի ձայնաւորներ Ստանկեվիչն ու Պասխալովը հարց են բարձրացրել նահանգական զեմստվոն վերացնելու մասին։ Այդ առաջարկը այնպիսի դայրոյթ է առաջացրել ժողովում, որ նրա քննութիւնը յետաձգվել է յաջորդ նիստին։ («Рѣчь»)

✦ Օրգէեվից հեռագրում են «Рѣчь» լրագրին, որ Դերենօվօ գիւղում անկարգութիւններ են տեղի ունեցել։ Պատճառը բացատրվում է նրանով, որ գիւղի մի մասը գիւղական տուրքերից (однодворцы), որոնք մինչև այժմ ազատ էին գիւղական տուրքերից, պահանջեցին վճարել այդ տուրքերը, իսկ նրանք խնդրեցին ժամանակ տալ մինչև ամսի վերջը։ Խնդիրը չը յարգվեց։ Այդ պատճառով գիւղը սկսեց յուզվել։ Գիւղացիներից մէկին սարժենիկը ծեծեց։ Ամբոխը գրգռված շրջապատեց հասարակական տունը, ուր թաքնվել էին իշխանութեան ներկայացուցիչները։ Սարժենիկները իրանց տուած հրամանի համաձայն համազարկ արձակեցին։ Զորս հոգի սպանվել են. վիրաւորներ շատ կան։ Զօրքեր են պահանջված։ Օրգէեվի գաւառի դէպքը ազդեցութիւն է ունեցել իսկոյն հարևան Բէլեցկի գաւառի Կօշկարենի, Ֆլօռանդեն, Կուչօէ, Զգարդեշտ, Մինդրեշտ և այլ գիւղերի վրա, ուր միածուխները ևս հրաժարվեցին վճարել հասարակական տուրքերը։ Մինդրեշտում ամբոխը կալանաւորից տանուտէրին, որը ուզում էր տուրքերը բռնի կերպով հաւաքել։ Տեղական իշխանութիւնները թշնամական վերաբերմունքի հանդիպելով ժողովրդի կողմից՝ օգնական սարժենիկներ պահանջեցին. արդէն հեռագրական հաղորդագրութիւնը հաղորդեց, որ անկարգութիւնները վերջացել են։

ՄԱՄՈՒԼ

Վիէննայի «Հանդէս Ամսօրեան» դեկտեմբերի համարի մէջ տալով հանգուցեալ Խրիմեան Հայրիկի կենսագրութիւնը և նրա գործունէութեան գնահատութիւնը մինչև կաթողիկոսանալը, ցոյց տալով որ այդ գործունէութիւնը եղել է արդիւնաւոր և փառաւոր, արժանի՝ որ Խրիմեան դասվի «այն եղակի անձնաւորութեանց կարգը, զորոնք երախտագիտաբար յիշելու և օրհնելու սովոր ենք»,—հետևեալ կարծիքն է յայտնում նրա կաթողիկոսական շրջանի գործունէութեան մասին.

Բայց զԽրիմեան նոյն համեմատութեամբ և գոհունակութեամբ չենք կրնար նկատել իբրև ազգի մը քաղաքական ներկայացուցիչը և մանաւանդ եկեղեցական պետը։ Խրիմեանի՝ վարչական նկարագիրը, կամաց զօրաւոր յարատև ներգործութիւն կը պակէր, գոնէ կաթողիկոսական շրջանի մէջ. եթէ ինչ ինչ կարևոր դէպքերու մէջ գոհացուցիչ դիրք մը բռնեց, այն Հայրիկի զգացմանց բուռն ազդեցութիւնն էր, իւր տանջուած ժողովրդեան տածած հայրական սէրն էր...

Ապա առաջ բերելով մի քանի անուղղակի պայմաններ, որոնց մէջ ստիպված էր գործել Խրիմեանը, ինչպէս պառակտումները, կուսակցութիւնները, ամսագիրը յայտնում է հայ կղերի մասին այս կարծիքը.

Կղերը ճաց գրեթէ այն, ինչ որ էր միշտ՝ ծանրութիւն ժողովրդեան, փոխանակ անոր դատիարակն, անոր հայրն ըլլալու։

Եւ եզրակացնելով.

Ապագայ պատմութիւնը մանրամասնութեանց իջած ատեն՝ դեռ բաւական քննադատելու բան պիտի գտնէ Խրիմեանի, իբրև հայոց կաթողիկոսի վրայ։

Եւ վերջացնում է այս խօսքերով.

Այժմ կաթողիկոսական աթոռը չը ունենք անհնարին, բայց խեղճ կացութեան մէջ կը գտնուի։ Մեծ շրջահայեցութիւն և կորով կը պահանջուի հանգուցելոյն պայծառատէն՝ ոչ միայն գահը վերստին բարձրացնելու, այլ և ազգին նիւթական ու բարոյական վիճակը բարւոքելու համար։ Ակնյայտնի է, որ դարձեալ շատերուն ակնարկն ուղղուած է այն թաքստոցը, ուր ապաստանած էր Խրիմեան Հայրիկ։

*

Ինչպէս յայտնի է, վերջին ժամանակներս հայ մամուլի մէջ արծարծվեց հաւազգային ժողով գումարելու միտքը։ Այդ առիթով «Մեր Ձայնը» թերթը (№ 9), հետևեալն է գրում.

Դաշնակցութեան բերան «Վտակ» թերթն իրեն յատուկ ճարճատուն բառերով շանթ ու կայծակ է արձակում նրանց հասցէին, որոնք հաւազգային ժողով են պահանջում հայ ժողովրդի գործերը անօրինելու համար։

«Մոլորութիւնը, ամենածայրայեղ ինքնախաբէութիւնն ակներև է այստեղ։ Ժողովուրդը լողում է սովի, արեան, սրածութեան, իրաւազրկութեան մէջ, օրհասական ջանքերով նա կախում է մինչև անգամ այն շիւղերից, որ ապահովում են նրա ապրելու իրաւունքը, և հենց այդ ժամանակ պահանջում է... «Հաւազգային ժողով», հայ ժողովրդի «գործերը անօրինելու» համար։

«Համազգային ժողով»... և այդ պահանջում են նրանք, որոնք շատ լաւ գիտեն, թէ սուլթան Աբդիւլ-Համիդը մի հայի չի թոյլատրի մտածել անգամ այդպիսի ժողովի մասին, ոչ մէկին չի թոյլատրի իր երկրի սահմաններից դուրս ելնել այդ ժողովին մասնակցելու համար»։ Իսկ մենք «Վտակին» կասենք հետևեալը.

Եթէ դուք ինքներդ այդպէս մայլ և դըժոխային նկարագիր էք տալիս Թուրքիային, ուր ոչինչ անել անկարելի է, քանի որ Աբդիւլ-Համիդը ոչ մի բան չի թոյլատրի հայերին անել, հապա ինչպէս վեր էք կացել և քարոզում գլխապատառ, թէ եկէք Վարագում, Մուշում ուսուցչանոցներ հիմնենք... Շնորհիա որ «մոլորութիւնը, ամենածայրայեղ ինքնախաբէութիւնը ակներև են այստեղ»...

*

Ի պատասխան այն թռուցիկի, որը «Մշակի» № 190-ի «Մամուլի» բաժնում արտատպված էր, Դաշնակցութեան Ամերիկայի կենտր. կոմիտէն հարկ է համարել հետևեալ յայտարարութիւնն անել.

Առնէ մը ի վեր Բոսթընի մէջ բողոքող դաշնակցականներու խօսքեր կըլլան։

Նկատելով որ հայ հասարակութիւնը և հեռաւոր ընկերներ, անտեղեակ իրողութիւններուն, կրնան թիւրիմացութիւններու զոհ ըլլալ, պէտք կը զգանք պաշտօնապէս յայտարարելու թէ «բողոքող դաշնակցականներ» գոյութիւն չունին ոչ միայն Բոսթընի, այլ և Ամերիկայի մեր ամբողջ շրջանակին մէջ։

Հետևաբար անոնք, որ կը խօսին առանունով, կեղծարարներ են և Հ. Յ. Դաշնակցութեան անունը շահագործելնուն համար՝ պատասխանատու։

Հ. Յ. Դ. Ամերիկայի Կեդր. Կոմիտէ

Այս յայտարարութիւնը մեզ վրա ճիշտ այն տպաւորութիւնն է թողնում, ինչ որ թիւրքաց իշխանութիւնների յայտարարութիւնը՝ հայկական կոտորածների միջոցին. «Շնորհիւ վեհ. սուլթանի՝ ամեն բան խաղաղ և անդորր է և բոլոր բնակիչները կաղօթեն նորին մեծութեան արեշտութեան համար»։ Եթէ բողոքող դաշնակցականութեան երևոյթը սահմանափակվէր միայն Ամերիկայի հայութեան շրջանում, գուցէ դեռ հաւատայինք կենտր. կոմիտէի անկեղծութեան, բայց այդ երևոյթը ընդարձակ և արդաւանդ հող է գտել թէ Ռուսիայի թէ Բուլգարիայի, թէ Բումինիայի և թէ Եգիպտոսի դաշնակցականների շրջանում։ Ուրանալով փաստերը, հերքելով իրողութիւնը, ոչ ճշմարտութիւնը կարելի է թաքցնել, ոչ վերը բուժել։ Պէտք է քաջութիւն ունենալ հասկանալու, որ ինչպէս քաղաքական նոր նախագիծը մեծ սխալ էր և արդիւնք քաղաքական տհասութեան, նոյնպէս և Դաշնակց. վերջին պատգ. ժողովի որոշումները արդիւնք են կատարեալ անծանօթութեան Հայաստանի վիճակին, պայմաններին։ Վերջապէս—և այս մենք ասում ենք թէ հնչակեանների և թէ դաշնակցականների համար—ժամանակ է հասկանալու, որ միլիտարիզմի վրա հիմնված, ուրեմն բռնութեան վրա հիմնված ամեն մի կազմակերպութիւն, թէկուզ շարված իդէական ձգտումներով, անխուսափելիօրէն կը հասցնի պառակտման, քայքայման և ոչնչացման։

Sapienti sat.

Առաջ ենք բերում դարձեալ մի ուրիշ թռուցիկ-յայտարարութիւն, որ բաց է թողել Բուխարեստի դաշնակցականների գժգոհ մասը.

Զանազան թիւրիմացութիւններու և անախորժութիւններու տեղի չտալու համար, մենք, Բուքրէշի դաշնակցական ընկերներս, նկատելով՝

որ Հ. Յ. Դաշնակցութեան չորրորդ ընդհանուր ժողովը, գումարուած այս տարուան սկիզբը, Դաշնակցութեան նախկին նպատակին վրայ աւելցուց նոր նպատակ մը ալ՝ հաստատելով «Կովկասեան գործունեութեան նախագիծը», որ կը նշանակէ մասնակցիլ Ռուսաստանի յեղափոխութեան. որով Դաշնակցութիւնը կը դարձի զուտ թիւրքահայ արիւնոտ դատին նուիրուած կուսակցութիւն մը ըլլալէ և նկատելով

որ մեր և ամբողջ բալքանեան շրջանի ընկերներու կողմէն և կրկնակ շրջանական ժողովներու մէջ «Նախագծի» դէմ տրուած բացարձակ քուէին հակառակ վարուեցաւ բալքանեան շրջանի պ. պատգամաւորը, ներկայիս կը յայտարարենք, որ

Մենք չենք ընդունիր վերջին ընդհանուր ժողովի այդ որոշումները, այլ կը մնանք Դաշնակցութեան նախկին նպատակը հետամտողներ և նախկին ծրագրով աշխատող դաշնակցականներ։

Անդրանիկ խումբ (ամբողջ), Արխանեան խումբ (ամբողջ), Կայծ խումբ (ամբողջ), Վազգէն խումբ (ամբողջ), Զէյթուն խումբէն 2 հոգի, Կուկաս խումբէն 4 հոգի, համակիր ընկերներէ նոր կազմուած Հրայր խումբ 12 հոգի։

Ահա և մի ուրիշ կոչ, որ Եգիպտոսի բողոքող դաշնակցականները հրատարակել են Ալէքսանդրիա քաղաքում և որով դիմում են բոլոր երկիրների գժգոհ դաշնակցականներին.

Հ. Յ. Դաշնակցութեան վերջին ընդհ. ժողովէն ի վեր շատ մը տեղերէ գժգոհութեան ձայներ կը լսուին այդ ժողովի մէջ տրուած որոշումներու մասին։ Այդ քննադատութիւնները տակաւ այն ձևով, ինչ ձևով որ տեղի կունենան թերթերու, յայտարարութիւններու ու թռուցիկներու միջոցով, նպատակի մը չծառայելէ զատ ընդհակառակը տեղի կուտան կրքերու բռնկումին, կը ծնանին յեղափոխական պրէսթիժին, և կը ստեղծուի դրութիւն մը, որուն ծնաները անցեալի դէպքերը շատ որոշ ցոյց կուտան մեզ։ Եգիպտոսի գժգոհ դաշնակցականները այդ բողոքները ու քննադատութիւնները տեղ մը կեդրոնացնելու և որոշ ուղղութիւն մը տալու համար բողոքներու ջանքերուն կազմեցին յատուկ մասնաժողով մը, որ այս յայտարարութեամբ կը դիմէ բոլոր երկիրներու գժգոհ դաշնակցականներուն, հրաւիրելով զանոնք դրկել իրենց բողոքներն ու գժգոհութեան պատճառները ստորև նշանակուած հասցէին միջոցով մասնաժողովին, աւելցնելով նաև այն միջոցները, զորս յարմար կը տեսնեն ներկայ դրութեան վերջ դնելու համար։

Մենք մեր կողմէն, առանց բողոքի առարկայ եղող խնդիրներու մասնաժողովի մէջ մտնելու, կուզենք պարզել միայն մեր տեսակէտը այն հարցի մասին, որ՝ ինչպէս կը կարծենք՝ գլխաւոր պատճառն է բոլոր գժգոհ դաշնակցականներու ամենախորին դայրոյթով վերաբերուելուն հանդէպ այն յեղափոխական կազմակերպութեան, որ իր ներկայ տարատամ, հակասական ոչ խստաշունչ աշխարհահայեացքովն ու գործելակերպովը կը մթագնէ և կաղմատէ տաճկահայկական այնքան պարզ դատը ու մեր տարրերէ է վեր իր անունով կատարած զոհողութիւններն ու տածած յոյսերը ի դերև կը հանէ։

Զորրորդ ընդհ. ժողովի որոշման համաձայն՝ Դաշնակցութիւնը, նկատի ունենալով Կովկասի հայութեան ներկայ կացութիւնը և ծնունդ առած սոցիալական պահանջները, պաշտօնապէս կը դառնայ ընկերվարական կուսակցութիւն մը, ընդունելով ընկերվարական ուղղութեան հասարակական, բարոյական ու տնտեսական աշխարհահայեացքը և այդ ուղղութիւնը ստիպողական կը դարձնէ նաև Տաճկահայաստանի համար։

Թէ Դաշնակցութեան տուած այս որոշումը որքան նպատակայարմար է Կովկասի համար՝ մենք չենք կրնար գիտնալ, որովհետև Կովկասի պայմանները մեզի ծանօթ չեն և հետևաբար իրաւունք չենք տար մեզի ոևէ կարծիք յայտնել այդ մասին։ Կովկասցիները իրենք միայն կրնան Դաշնակցութեան ծրագիրը քննութեան ենթարկելով ընդունիլ կամ մերժել, և մեզ տաճկահայերուս համար շատ սխալ պիտի ըլլար անոնց ներքին խնդիրներուն խառնուիլ։

Գալով Տաճկահայաստանի, մեզի բողոքող դաշնակցականներուս համար անհնարին է հետևիլ ընկերվարական Դաշնակցութեան, որովհետև չենք կրնար ընդունիլ ոչ իր աշխարհահայեացքը, ոչ իր քաղաքական-հասարակական ձգտումները և ոչ ալ զանոնք կեանքի մէջ իրականացնելու համար ընդունած գործելակերպը։ Ընդհ. ժողովը ընդունելով ընկերվարական աշխարհահայեացքը, այսինքն ժողովուրդներու զարգացման փրօցէսի մէջ տնտեսական հարցի գերակշռութիւնը և այդ սկզբունքի վրայ հիմնուած գործելու ուղղութիւնը, Դաշնակցութեան գործունէութեան ծանրութեան կեդրոնը փոխադրած կըլլայ առաւելապէս տնտեսական հողի վրայ, իրեն կռուան ընտրելով ընականաբար բանուոր դասակարգը և իրմէ վանելով բոլոր այն տարրերը, որոնք առանց սոցիալիստական դաւանանքն ու գործելակերպը ընդունելու կուզեն աշխատիլ։ Դաշնակցութիւնը ընդունելով ընկերվարական սկզբունքը և որոշ դասակարգի մը իրաւունքներուն պաշտպանութիւնը ընելով իր նպատակոկէտը՝ կը դարձի տաճկահայ ժողովրդի ազատագրութեան գործը վարելու կոչումէն, կը դրժէ իր ծագումին և մնայէջ ֆրազներով կը ճգնի պարտկել կատարուած դասալքութիւնը։

Համառօտակի բացատրելէ յետոյ մեր տեսակէտը և մտածելով որ զանազան տեղերէ առանձին առանձին յայտնուած բողոքները ոչ մէկ դրական արդիւնքի չեն հասնիր, մենք կառաջարկենք գժգոհ դաշնակցականներու համաժողով մը գումարել, որի նպատակը պիտի ըլլայ օրինական ամեն միջոցներով աշխատիլ մեր բողոքները լսելի ընել և փոխել տալ Դաշնակցութեան ծրագրի այն մասը, որ տաճկահայկական խնդրին կը վերաբերի։ Իսկ թէ ինչ պէտք է ընել երբ մեր բողոքները անլսելի մնան և յառաջիկայ ընդհ. ժողովի մէջ կրկնուին այն ապօրինութիւնները, որոնք վերջին ընդհ. ժողովի յատկանշական մէկ կողմը կը ներկայացնեն, այս մասին կը հրաժարինք ոևէ կարծիք յայտնելէ, այլ կը ձգենք համաժողովին վերջնական որոշում մը տալ։

Համաժողովի համար ամենայարմար տեղը կը նկատենք Եգիպտոսը և մենք կառաջարկենք բոլոր գժգոհ դաշնակցականներուն միանալով իւրաքանչիւր շրջանէ պատգամաւոր ղրկել այս ժողովի համար։ Համաժողովի ժամանակին ու յարակից մանրամասնութիւններու համար պէտք է դիմել ստորև գրուած հասցէին միջոցով մասնախումբիս և անոր հետ բանակցիլ։

Եգիպտոսի բողոքող դաշնակ.

Մասնախումբ

Մեր հասցէն՝—Sétrak Gabrielian, Poste Française, № 234, Alexandrie (Egypte).

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Արդաբիլ, 10 դեկտեմբերի

Դեկտեմբերի 10-ին, կիրակի օր, ժամանեցին քաղաքիս երկու ուժեղ մրցող մուշտէյիղները՝ այն է Հաջի Միրզա Իբրահիմ աղան՝ և աղա Միրզա Ալիաքբարը, որոնց քաղաքից հեռացրել էին կառավարութեան հրամանով։ Առաջինը գտնվում էր քաղաքից 4 ժամվայ հեռաւորութեան վրա գտնվող Նուշար գիւղում, իսկ երկրորդը Լէնքօրանումն էր և վերջին ժամանակներս Աստարայում։ Դրանք մեղադրվում էին այն խռովութիւնների համար, որ տեղիք էին տուել 6 ամիս առաջ դատաւորի քաղաքից բացակայ եղած ժամանակը։ Աւելորդ եմ համարում ընթերցողին ծանօթացնելու, թէ խռովութիւնները որտեղից են սկիզբ առել։ Այն ժամանակները, երբ հաստատվում է այստեղ անջնջելի, Միրզա Ալիաքբարը աղան նշանակում է իր կողմից զեկավար, միւսն էլ հակառակում է նրա ընտրած և նշանակած պետին, ասելով թէ՝ երբ սահմանադրութիւն, է անջնջանում իւրաքանչիւր անհատ կարող է նշանակել պետ։ Սա էլ պնդում է իր առաջարկի վրա։ Վերջապէս իւրաքանչիւրը ցանկանում է իր խօսքը առաջ տանել։ Վերջը, երբ հարցը սուր կերպարանք է ստանում, դիմում են խստամիջոցների և ֆիզիքական ոյժի։ Միրզա Ալիաքբար աղան հրաւիրում է իր պաշտպանութեան և հակառակորդի դէմ մրցելու համար յայտնի Կօչաբակցի կոչված Շահսուվան ձիաւորներին, իսկ Միրզա Իբրահիմ աղան ժողովում է իր շուրջը Փօլադցի և Շահսուվան ազգերից և անա երկու կողմերից այդ օրերում դիրք մտած՝ սկսում են ոգևորված հրացանաձգութիւն։ Գնդակաձգութիւնը տևում է ամբողջ 15 օր, ցերեկ ու գիշեր։ Այդ օրերում շուկաները միանգամայն փակ էին և իւրաքանչիւրը՝ թէ վաճառական դասակարգից և թէ արհեստաւոր՝ ըստ առաջ աշխատում էր խանութը դատարկել տուն, որպէսզի անգութ Շահսուվանը մուտք չը գործէ և չը կողոպտէ։ Այդ օրերում հաղորդակցութիւնը միանգամայն ընդհատվել էր. ամբողջ քաղաքը դրված էր այդ օրերում շահսուվանների տրամադրութեան տակ, այնպէս որ օրը ցերեկով, նոյնիսկ փողոցում, կողոպտում էին անցուդարձ անողին. իսկ երեկայեցէք՝ գիշերներն որքան կողոպտումներ էին տեղի ունենում և որքան երկիւղալի էր, անհնարին է նոյնիսկ նկարագրել։ Այդ օրերում ալիւրի արժէքը բարձրացել էր լիտրը 5-ից մինչ 6 դրան։ Սարսափելի թանգութիւն էր։ Զբաւոր դասակարգը սովածութիւնից հալումաշ էր եղել. և այն էլ չը մոռանամ յիշեցնել, որ այդ հրացանաձգութեան ժամանակ փամփուշտ և դրամ հաւաքում էին տեղացիներից։ Ի միջի այլոց, այդ միջոցին շահսուվանները գրաւոր դիմել էին տեղիս հայերին և սպառնալիքներով փամփուշտ և նիւթական միջոցներ էին պահանջել. վերջիններս էլ բաւարարութիւն և գոհացում տուին։

Եւ որպէսզի քաղաքի անդորը և խաղաղ կեանքը չը խանգարվի և վերոյիշեալները չը կրկնվին, տեղիս ներկայ դատաւոր Ռաշիդ-ուլ-Մուլքն ստորագրութիւն է տաել տեղիս արհեստաւոր դասակարգի ծերերից, այն է՝ 32 հոգուց բաղկացած, որոնք յանձն են առել դիմադրել ամենայն մի խոչընդոտի՝ և նոյնիսկ երաշխաւորել, որ շուտով այդ երկուսի մէջ հաշտութիւն կը կայացնեն. մի խօսքով ամենայն պատասխանատուութիւն իրանց վրա են առնում, և ապա դատաւորը ազատ թոյլատրում է քաղաք մուտք գործելու. ստորագրողներից մէկը պատմում է հէնց եղելութիւնը, որ և նոյնիսկ ականատես է եղել և ստորագրել. և որպէս լսում ենք, տեղիս ռուսաց հիւպատոս Բրօբրաժենսկին հեռագրով դիմել է արտաքին գործերի մինիստրութեան և թէ Թէհրանի

դեսպանատան, մեջոցներ ձեռք առնել կըրկին հեռացնելու այդ խռովարարներից մէջ-կին. հետևանքի մասին հետևեալ անգամ։

Տեղացի

Յ. Գ.— Այս էլ յիշեցնենք, որ այդ երկու մրցող ուժերը ազգականներ են՝ քեռի և քրոջորդի են։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Դ Ա Ր Ս Կ Ա Ս Տ Ա Ն

Խառնակութիւններ.— Արտաքուստ, ձեռքան տեսակէտից կրկին վերջացել է արդէն։ Շահը պահանջվող զիջումները արեց (զուցէ ոչ առանց ճնշումների դեսպանութիւնների կողմից. պարլամենտի ուլտիմատումին շահը պատասխանելուց առաջ երկարատև խօսակցութիւն է ունեցել ռուսաց և անգլիացոց դիպլոմատիական ներկայացուցիչների հետ)։

Մոստացել է պաշտօնապէս անել Նիզամ-էս-Սալթանէին և ազատամիտ մինիստրութիւն կազմել։ Մէջլիսի տրամադրութեան տակ դրված են դիներորական պահակներ. բացի դրանից այսուհետև բոլոր զօրքերը ենթարկվում են ժողովրդական ներկայացուցչութեան առաջ պատասխանատու զինորական մինիստրին։

Այդ զիջումները չափազանց կարևոր են, բայց և այնպէս, ըստ երևոյթին, դեռ ևս ոչ մի երաշխաւորութիւն չը կայ, որ շահը իր տուած խոստումները չի խախտի։

Թերահաւատութիւնը և անվստահութիւնը դէպի մի անգամ արդէն իր տուած երդումը խախտող շահը՝ սատակտնում է ևս առաւել նրա համար, որ անհաշտ ըէակցիոն կուսակցութիւնը բացարձակ կերպով շարունակում է իր պայքարը։

Այդ բոլորը արդեալ է լինում երկրի խաղաղացման և պահանջում է շարունակվող խռովութիւնները, որոնք մանաւանդ մեծ չափեր են ստանում գաւառական անկիւններում։

Թաւրիզում, օրինակ, անգլիական «Standard» և գերմանական «Berl. Tagebl.» լրագիրների ստացած հեռագրական տեղեկութիւնների համաձայն, բանը այն տեղն է հասել, որ կատարեալ անիշխանութիւն է տիրում։

Ազգաբնակութեան յուզմունքը քաղաքական, հաստատ՝ վայրենի ձևերով է արտայայտվում։ Փողոցներում անկարգութիւններ են տիրում, և իշխանութիւնները բոլորովին անզօր են դրանց առաջն առնելու համար։ Եղել են յարձակման մի քանի դէպքեր օտարերկրացի վաճառականների խանութների վրա։ Թաւրիզի օտարերկրացի ազգաբնակութիւնը սարսափահար եղած փախչում է Անդրկովկաս։

Ի հակառակ առնելով ռուս-պարսկական սահմանի վրա վերջին ժամանակներս յաճախակի կրկնվող աւազակութիւնները, հարկ եղաւ ուժեղացնել սահմանագծի վրա գտնվող կազակների կօրդոնները։

Դրա հետ միաժամանակ Թիւրքիան ևս դէպի սահմանագիծն է քաշում իր զօրքերը։

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ

Թի Շինէվ։ Գիշերս Կավկազ կոչված ապուարձանում կողոպտման նպատակով անյայտ չարագործներ սրի են քաշել մի ամբողջ ընտանիք։

ԽԱՐԿՈՎ. Մի զավզում ոստիկանութիւնը գտաւ 9 լցրած ռուժբ։

ԼՕՆԴՈՆ։ Լուրերին նայած, բանակցութիւններ են տեղի ունենում «Թայմս» լրագիրը ակցիոներական ընկերութեան վերածելու համար, այն պայմանով, որ հրատարակիչը Ֆայ Վալտերը։ Լրագրի ընտրորութիւնը չի փոխվի։ Նա առաջվայ նման մնալու է անկախ՝ կուսակցական ամեն տեսակ հայեացքներից։

ՏՕԿԻՕ։ Պարլամենտը բանալու ժամանակ կարդացվեց հետևեալ գահական ճառը. «Բանում ենք կայսերական պարլամենտը, դիմում ենք պալատի անդամներին հետևեալ կոչով. մեզ համար անվերջ զոհացում է պատճառում այն հանգամանքը, որ մեր կայսրութեան յարաբերութիւնները դաշնակիր պետութիւնների հետ աչքի են զարնվում օրէ-օր աճող բարեկամութեամբ։ Մեր դաշնակցութիւնը Մեծ Բրիտանիայի հետ շարունակում է ուժեղանալ և հաստատ հիմքեր ընդունել։ Հեռաւոր Արևելքում մշտական հաշտութիւն կնքելու նպատակով մենք համաձայնութիւն կապեցինք Ֆրանսիայի և Ռուսաստանի հետ և նոր համաձայնութեան մէջ մտանք Կօրէայի հետ, շարունակ ուժեղացնելով համերաշխութեան մեր յարաբերութիւնները երկու պետութիւնների միջև։ Մենք հրամայեցինք մինիստրներին միջոցներ մշակել՝ ազգային ֆինանսների կացութիւնը ապահովելու համար և մեր քննութեան ներկայացնել 41 տարվոյ նախահաշիւը և զանազան հարցերի օրինագծեր։ Ցոյս ունենք, որ համապատասխան մեր ցանկութիւններին, դուք հնաստատակամ կիրակացնեք ձեր վրա դրած պարտականութիւնները և, քննելով ձեզ ներկայացված նախահաշիւը, կը տաք ձեր համաձայնութիւնը»։

Լրագիրների տեղեկութիւններից երևում է, որ Միացեալ-Նահանգները և Եապոնիան եկել են վերջնական համաձայնութեան Եապոնական գաղթականութիւնը Ամերիկա արգելելու վերաբերութեամբ։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Ե. Կ. ԽՕՌՆԵՎԱ—9½—2 ժ. ատամի հիւ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկախտ.։
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՂԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՕՎ—11—12 ժ. կանանց և մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.
Վճարը 50 կ.։ Զբաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԱՆԴՐԿՈՎԿԱՍ. ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ ԶՄԵՌԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹԻՒՆ

(Նշանակված են Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ

ԲԱԳՈՒ (Գանձակ, Եւլախ)
Սրագ—գիշ. 12 ժ. 28 ր., Գանձակ—գիշ. 5 ժ. 42 ր., Եւլախ—առաւ. 7 ժ. 19 ր., Բագու—ցեր. 2 ժ. 43 ր.։ Պօստ.—երեկ. 9 ժ. 41 ր., Գանձակ—գիշ. 4 ժ. 13 ր., Եւլախ—առ. 6 ժ. 27 ր., Բագու—ցեր. 5 ժ. 39 ր.։ Մարդատար—ցեր. 7 ժ 53. ր., Գանձակ—ցեր. 2 ժ. 10 ր., Եւլախ—ցեր. 4 ժ. 21 ր., Բագու—գիշ. 1 ժ. 50 ր.։

ԲԱԹՈՒՄ (Գօրի, Միխայլօվո, Ռիօն)
Մարդատար (№ 7).—առ. 10 ժ. 58 ր., Գօրի—ցեր. 1 ժ. 30 ր., Միխայլօվո—ցեր. 2 ժ. 58 ր., Ռիօն—երեկ. 7 ժ. 21 ր., Բաթում—գիշ. 12 ժ. 10 ր.։ Պօստ.—առ. 9 ժ. 15 ր., Գօրի—ցեր. 11 ժ. 49 ր., Միխայլօվո—ցեր. 1 ժ. 19 ր., Ռիօն—երեկ. 5 ժ. 47 ր., Բաթում—գիշ. 10 ժ. 45 ր.։ Մարդատար (№ 5)—գիշ. 11 ժ. 22 ր., Գօրի—գիշ. 1 ժ. 57 ր., Միխայլօվո—գիշ. 3 ժ. 20 ր., Ռիօն—առ. 7 ժ. 41 ր., Բաթում—ցեր. 12 ժ. 27 ր.։

ԵՐԵՒԱՆ (Ալէքսանդրօպոլ)
Ապր.-մարդ.—ցեր. 3 ժ. 16 ր., Ալէքսանդրօպոլ—գիշ. 2 ժ. 30 ր., Երևան-Ուլուխ. առ. 8 ժ. 22 ր.։ Պօստ.—գիշ. 1 ժ. 8 ր., Ալէքսանդրօպոլ—ցեր. 11 ժ. 53 ր., Երևան—Ուլուխ.—ցեր. 5 ժ. 35 ր., Նախիջևան—գիշ. 12 ժ. 32 ր., Ջուլֆա—գիշ. 2 ժ. 35 ր.։

ԲԱԳՈՒԻՑ (Պետերբուրգի ժամանակով)
Մարդատար—առ. 4 ժ. արագ.—ցեր. 4 ժ. 4 ր.։ Պօստ.—ցեր. 11 ժ. 23 ր.։

ԲԱԹՈՒՄԻՑ—Մարդ.—առ. 10 ժ. 38 ր.։ Պօստ.—առ. 6 ժ. 49 ր.։ Մարդատ.—ցեր. 5 ժ. 46 ր.։

ԵՐԵՒԱՆ-ՈՒԼՈՒԽԱՆԼՈՒԻՑ — Պօստ. — առ. 1 ժ. 58 ր.։ Ապրանք.-մարդատար—գիշ. 1 ժ. 50 ր.։

ԶՈՒԼՖԱՅԻՑ—Պօստ. գիշ. 4 ժամին։ Մարդ.-ապրանք.—ցեր. 3 ժ. 21 ր.։

ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ — Պօստ. —7 ժամին։ Մրդ.-ապրանք.—6 ժ. 58 ր.։

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՕՆ
Հայ դերասանական ընկերակցութիւնը
ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՕՆՈՒՄ
Երկուշաբթի, դեկտեմբերի 17-ին,
Կը ներկայացնէ երկրորդ անգամ
Օ. ՄԻՐԲՕՅԻ յայտնի պիէսը
ԺԱՆ-ՌՈՒԻ
Դրամա 4 գործ.
Մասնակցում է ամբողջ խումբը
Սկիզբը ժամը 7½-ին.
2. Կ. 1—2

Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան Վարչութիւնը, յայտնելով որ առաջիկայ Նոր-տարվայ եւ Ծննդեան տօների առիթով շնորհակալութեամբ ընդունում է ԱՂՔԱՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆՈՒԷՐՆԵՐ գրամով, մթերքներով և շորով, ամենայն օր ժամը 10-ից մինչև 2-ը ընկերութեան գրասենեակում (Абасъ-Абадская площ. № 7), խոնարհաբար խնդրում է բարեսիրտ ունևորներին օգնութեան հասնել թշուառներին։ Ընդունվում են նաև նուիրատուութիւններ տօների այցելութիւնների փոխարէն։ 5—2

Զգուշացէք կեղծումներից
ԲՕՐՆՕ-ՏԻՄՕԼԵԱՆ ՍԱՊՕՆ
Գ. Ֆ. ԻԻՐԳԵՆՍԻ
Պեպինների, սեռութեան, դեղին բծերի, պուզիկների և պտուկների դէմ։ Անուշահոտ տուալէտային սապոն բարձր արժանաւորութեան։ Ծախվում է ամեն տեղ 1 կտորը 50 կօպ., ½ կտորը 30 կօպ.։ Ոսկէ մէդալ, Լօնդոն, 1893 թի համար։ Գլխաւոր պահեստը Գ. Ֆ. Իւրգենսի մօտ, Մօսկվայում։
(14, 29) 6—25

ԲԺՇԿ Ա.Պ Ե Տ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
Վերադարձաւ Կովկասի հանքային ջրերից և վերսկսեց ընդունելութիւնը ներքին և ջղային հիւանդների, առաւօտ. 9—12 ժ., երեկ. 5—7 ժամ։
Միքայէլեան փողոց, № 27։
(Ե. Հ. Հ. Կ.) 46—50

ԲԺԻՇԿ
Գ. ՄԱՂԱՔԵԱՆ
Ներքին եւ երեխայոց, առանձնապէս սատմոխի եւ ալիքների հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր | 12—1 ժ. առաւօտեան, 5—7 ժ. երեկոյեան
Միքայէլեան փողոց ս. Ճավճավաձէի № 36.
(ա.օ.) 75—100

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Ընդունում է հիւանդներին. մանագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Սօլօլակ, Բեհբութեան փողոց № 33։
(ա. օ.) 75—100

„Գուտենբերգ“
գրավաճառանոցում վաճառվում են փառակազմ հետևեալ մանկական գրքերը.
(Գրքերի գները նշանակված են առանց կազմի, կազմ. 40—75 կ.)
Ամերիկացի Պօրլէյի զրոյցներ, թարգմ. Կոստաբ Օձնեցի 30 կ.։
Ռօբինզօնի պատմութիւնը, թարգմ. Գիւաքահ. Աղանեանցի 60 կ.։
Հայ մանուկներին. Գաղթականներ, փոխ. Ցակ. Ղազարեանի 10 կ.։
Ֆուլտօն և Ստեֆենսոն (շոգենաւի և շոգեկառքի հնարողները) փոխ. Ն. Զիգիանեանի 15 կ.։
Ֆլատ Սկրուջը, Ծննդեան վէպ, Չ. Դիկկէնսի, անգլ. թարգմ. Ն. Զիգիանեան 15 կ.։
Ցրտին, Օստրօգորսկի 5 կ.։
Զորս պատկեր, Ս. Զարօվիչ, թարգմ. ռուս. 1 կ.։
Ուրբնօեցի մանուկը (Ուդի հեքիաթներից) 10 կ.։
Մարգարէ մանեակ, Ե. Տուր, թարգմ. Օր. Նուարդ 10 կ.։
Ծննդեան ընծայ, մանկական գրքոյկ (1 պատկերով), Խ. Խաչատրեանի 5 կ.։
Ռուբէնի զրաղմունքը, Բօստրօմ, թարգմ. ռուս. 25 կ.։
Փշրանք, Կ. Կ. Մելիք-Շահնազարեան 15 կ.։
Երեք մոգեր (Ռալլէսից), փոխ. Յ. Կարապետեանի 10 կ.։
Արջի պատմութիւնը և գայլը, Լ. Շելգունովա, թարգմ. ռուս. 15 կ.։
Ի՞նչ է հեքիաթը, Կ. Մուլիկա, թարգմ. Ղ. Աղայեանի 10 կ.։
Վարդ-Բէլլին Ե. Սպիրի, թարգմ. գերմ. Ի. Յ. 10 կ.։
Զալօյի էշը, պատմուածք մանուկների համար (երեք պատկերով), Յ. Աղաբաբեանի 3 կ.։
Գառնուկ և Լուսատտիկ, մանկական վէպեր Ֆ. Շմիդտի, թարգմ. Նուարդի 25 կ.։
Տորք-Անգեղ և Հայկանուշ գեղեցիկ, Ղ. Աղայեանի 5 կ.։
Ոտանաւորներ (երեխաների համար) 15 պատկերով, Էմմանուէլ քահ. Նազարեանցի 50 կ.։
Որբ Աննան, Կ. Լուկաշեվիչ, թարգմ. ռուս. 12 կ.։
Գիւղում, Երգօլակայա, թարգմ. ռուս. 20 կ.։
Գոռոզ Ազգէն, Վ. Գարշին, թարգմ. Հ. Ա. 5 կ.։
Գոռոզ Արմաւենին, Վ. Գարշին, թարգմ. Հ. Ա. 5 կ.։
Փոքրիկ Պարոյրի արկածները, Ա. Դ. Զացեցնայա 15 կ.։
Լուսատտիկներ Մամին-Սիբիրեակի, փոխ. Կ. Մելիք-Շահնազարեանի 40 կ.։
Կարմիր գդակ, մանկական գրաքան, 20 կ.։
Երեք կատուի պատմութիւնը, մանկական գրաքան, 20 կ.։
Բրաբա, Է. Օժէշկոյի 15 կ.։
Պառաւ ծիրը, Դ. Մամին-Սիբիրեակ, թարգմ. Ե. Սարգսեան 3 կ.։
Արցունք, Ա. Կրասնիցկի, ազատ թարգմ. օր. Մ. Ս. 15 կ.։
Զարմանալի որդ, ռուսերէնից թարգմ. օր. Ն. Ղուլիջանեանց 10 կ.։
Կոլումբ (փոքրերի համար) կոմս Լ. Տօլստոյի, թարգմ. Փ. Վարդանեան 15 կ.։
Դարևոր կաղնին, թարգմ. Ֆրանսեր. 6 կ.։
Ռօբինզօն, փոքրերի համար, 20 կ.։
Եւանգելինա և Կոլմարի դատաւորի տեսիլը, փոխադրեց Յար. Դարագեօզեան 20 կ.։
Հրէայ Արնէրը, որ ոչինչ չէր տեսել, Վ. Հաուֆի, թարգմ. օր. Շ. Տ. Ն. 3 կ.։
Վերոյիշեալ գրքերից կարելի է ձեռք բերել և առանց կազմի, կամ հասարակ կազմերով, այն է 15 կօպ.։
Առանց կանխավճարի ոչ ոքի գիրք չենք ուղարկում։
Դիմել՝ Тифлисъ, книжный магазинъ „Гуттенбергъ» Г. Галустянцу.
2—2

ՍԵՓԱԿԱՆ այդուց ստացված «Կախէթի» վաղն խաղողից պատրաստված կարմիր գինի ուզողներին կարող եմ յանձնել Գանձակի կայարանում՝ ՎԵԴՐՕՆ (30 ֆունտ) 1 ՐՈՒԲԼԻ 30 ԿՕՊ։ Դիմել հետևեալ հասցէով. Аветику Артемьевичу Саакянцу (Бананцеци).
5—4

Լոյս տեսաւ
ՍԱՀԱԿ ԳԱՀ. ՍԱՀԱԿԵԱՆՑԻ
«ԴԱՍԱՏԵՏՐ ԿՐՕՆԻ»
առաջին տարվայ պատկերազարդ հրատարակութիւնը։
(օ. մ.) 10—3

ԺՈՂՈՎՐԴ. ԼՈՒՍԱՒՈՐ. ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՏԱԿ
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Գարեգին Լեւոնեանի
Թիֆլիսում
(Ժամանակաւորապէս Յովհաննան դպրոցի շինութեան մէջ)
Երկու սեռի անձերի համար
Երկրորդ կիսամեակ՝ յունվար—մայիս
Պարապմունքները երեկոները՝ 5—7 ժ.
ԱՒԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՆՆԵՐ. Նկարչութիւն, գծագրութիւն, գեղագրութիւն, ձեռարուեստ, փորագրութիւն, քանդակագործութիւն, շքեղ ձեռագործ, հեռանկար (պերսպեկտիվա), գոյների և ստուերների տեսութիւն, գեղարուեստի պատմութիւն։ Քանդակագործութեան դասերի համար հրաւիրված է պ. Ա. Թաշճեան։
Յունվարից—մայիս վճարն է 25 ռուբ. կամ ամսական 5 ռուբ., դպրոցականների համար 15 ռ. և 3 ռ.։ Յաճախել ցանկացողները դիմելու են կուրսերի հիմնադրին՝
(29, 9, 12) Бебутовская, 12, առ. ժ. 10—12. 1—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Հայոց Ազգագրական ընկ. հրատարակութեամբ
ԼՈՅՍ ՏԵՍՆՈՂ
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻ
XVI գիրք
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.—Կոնդակ Մկրտիչ Ա. Վեհափառ Կաթողիկոսի՝ տուած Ազգագրական ընկ.—Նոր-Բայազէտի գաւառ. Ե. Լալայեանի.—Դուրա, պարսկական վիճակաւոր Մար. Յով.—Հայոց ժողովրդական վէպը Մ. Աբեղեանի.—Հայոց ժառանգական իրաւունքը. Խ. Սամուէլեանի.—Ս. Էջմիածին և հայոց հնագոյն եկեղեցիները. Մեսրոպ վարդապետ Տէր-Մովսիսեանի.—Կաթողիկոսական յուշարկաւորութիւն և թաղումն. Գարեգին վարդապետ Յովսէփեանի.—Զուարթնոց բեւեռագրի մասին. Բասմաջեանի.—Ազգագրութիւն և Պոշլեան. Ա. Եղեկեանի.—Մատենախօսութիւն.—Ծրագիր Հայոց Ազգագրական Թանգարանի համար նիւթեր հաւաքելու։ Զարդարված է պատկերներով։
ԲԱՑՎԱԾ է
Առաջիկայ 1908 թի բաժանորդագրութիւնը։ Տարեկան՝ 4 գրքի բաժանորդագին է 5 ր.։ Կիսամեայ՝ երկու գրքինը 3 ր., մի գրքինը 1 ր. 50 կ.։
Դիմել՝ Редакція «Азгаграканъ Андесъ», Тифлисъ, Саперная № 5.
(2.) 1—2

ԲԱԳՈՒԻ ՀԱՅՈՑ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ
ցանկանալով պատանի սերնդի մէջ ընթերցասիրութեան սէր արծարծել որոշել է առաջիկայ 1908 թ. սկզբից հրատարակել մի պարբերական պատկերազարդ երկշաբաթաթերթ
„ՊԱՏԱՆԵԿԱՆ-ԳՐԱԴԱՐԱՆ“
որի բովանդակութիւնը կը լինի թարգմանութիւն եւրոպական հռչակաւոր հեղինակներից, որպիսիք են՝ Ժիւլ-Վերն, Մայն-Ռիդ, Ֆենիմօր-Կուպեր, Գուստաւ-Էմար, Վալտեր-Սկօտ և այլք, որոնց վէպերն ու պատմուածքները շատ նպատակայարմար են ճանաչված, պատանիների ընթերցասիրութեան ծարաւը յագեցնելու համար։
„ՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ“-Ը
կը հրատարակվի կանոնաւոր կերպով երկու շաբաթը մի անգամ, ուրեմն տարվայ ընթացքում 26 գրքոյկ։ Այս 26 գրքոյկները մի երկու տարվայ ընթացքում իւրաքանչիւր ընտանիքի համար մի համեստ գրադարան կարող են կազմել։
Խմբագիր Կ. ԽԱՏԻՍԵԱՆ
Տարեկան գինն է Բագուի մէջ . . . . . 5 ր.
Ուրիշ քաղաքներում . . . . . 6 ր.
Արտասահման . . . . . 8 ր.
Դիմել՝ Баку, редакція журнала „Патанеканъ-Градаранъ“—Контора Бакинскаго Армянскаго Культурнаго Союза. 8—4

Открыта подписка на 1908 годъ
НА ГАЗЕТУ
„КАВКАЗЪ“
(ГОДЪ ИЗДАНІЯ LXIII.)
Особенное вниманіе въ предстоящемъ году будетъ удѣлено отдѣлу корреспонденцій и сообщеній изъ губерній и областей Кавказскаго края и краевымъ вопросамъ
ПОДПИСНАЯ ЦѢНА СЪ ДОСТАВКОЙ И ПЕРЕСЫЛКОЙ

	На годъ	11 мѣс.	10 мѣс.	9 мѣс.	8 мѣс.	7 мѣс.
Для городскихъ подписчиковъ	7 р.	6 р. 50 к	6 р.	5 р. 50 к.	5 р.	4 р. 50 к.
Для иногородныхъ	8 р. 50 к.	8 р.	7 р. 50 к.	7 р.	6 р. 50 к.	6 р. —
	На 6 мѣс.	5 мѣс.	4 мѣс.	3 мѣс.	2 мѣс.	1 мѣс.
Для городскихъ подписчиковъ	4. р.,	3 р. 50 к.	3 р.	2 р. 25 к.	1 р. 50 к.	75 к.
Для иногородныхъ	5 р. 50 к.	5 р.	4 р.	3 р.	2 р.	1 р.

Отдѣльные номера по 5 копеекъ.
Допускается разсрочка для годовыхъ подписчиковъ
Контора и редакція—въ Тифлисѣ, Эриванская площадь, домъ Харазовой. 1—3

Վաճառքի կայ զանազան տիպերի պատրաստի արձանների ահագին պաշար չափաւոր գներով, ինչպէս և ընդունվում են պատուէրներ մարմարեայ և մոզաիկ աշխատանքների։
(Չ. Հ.) 8—10

Электропечатня «ЭКОНОМІЯ» Авакъ Мугдусіаковъ съ С-ми. Большая Ванкская ул. д. Семинаріи № 3